

Հավելված N1
 Հայաստանի Հանրապետության
 պետական եկամուտների կոմիտեի նախագահի
 2020 թվականի ապրիլի 17-ի
 N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 30-06-2022 թ. որոշմամբ
 «ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
 Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
 հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԲԱՂԱՄՅԱՆ 24	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.01136	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2009-09-02	
1.5 ՀՎՀՀ-ն	00100778	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)91219259	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը	haik.antoniann@gmail.com	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Գագիկ Արզումանյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	20	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակներով պայմանավորված	41,238,119
	Մանկական վերականգնողական կենտրոնի համար կավագործական սարքավորում ձեռք բերելու համար	520,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		

9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվություններ/ նվիրաբերություններ		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Գրքեր	840,800
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	Գրքեր	793,900
	ֆոտոսարքավորումների նվիրատվություն	1,807,595
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Մանկական վերականգնողական կենտրոն	39,782,374	
Հայրենիքի պաշտպան	20,788,165	
Մեր սերունդ	13,601,000	
Հեռուստահաղորդաշար	7,157,315	
Գրքերի ձեռք բերում նվիրատվությունների համար	2,704,680	
Օգնություն արցախցիներին	2,000,000	
Նվիրատվություն պարարկեստի քոլեջին	2,200,000	
Նվիրատվություն ՀԲԸՄիությանն ընդհանուր կանոնադրական նպատակների իրականացման համար	8,500,000	
Աջակցություն կարիքավորներին	1,606,360	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	167,973,150	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	98,339,894	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 39 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Երևան իմ սեր» հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2021թ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն.....	1
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	2
Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1	Հիմնադրամը և նրա գործունեությունը	5
2	Հիմնադրամի գործառնական միջավայրը	5
3	Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն	6
4	Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ	14
5	Նոր կամ վերանայված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառումը	15
6	Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ	16
7	Միջոցների օգտագործումից եկամուտ	22
8	Վարչական ծախսեր.....	22
9	Շահութահարկ	22
10	Հիմնական միջոցներ	23
11	Կապիտալացված շինարարական աշխատանքներ.....	24
12	Բանկերում պահվող ժամկետային ավանդներ	25
13	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26
14	Հետաձգված հասույթ	27
15	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	28
16	Ռիսկերի կառավարում	28
17	Ռիսկերի կառավարում	32
18	Կապիտալի կառավարում.....	33
19	Պայմանական պարտավորություններ.....	33
20	Գործարքներ կապակցված կողմերի հետ	34
21	Իրադարձություններ հաշվետու ժամանակաշրջանից հետո	34



Անկախ աուդիտորական եզրակացություն

«Երևան իմ սեր» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին:

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Երևան իմ սեր» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») ֆինանսական վիճակն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Հիմնադրամի նույն ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2021թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԻՎ Կարքազիրք») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԻՎ Կարքազիրքին համապատասխան:

«Փրայտլթերհաուս Կուպերս Արմենիա» ՄՊԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Մարգարյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ

Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, www.pwc.com/am



Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի խումբը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում:



- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ հսումքը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Ալեքսեյ Ռուսասոբ
Տնօրեն



PricewaterhouseCoopers Armenia LLC

30 Հունիսի 2022թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն

«ԵՐԵՎԱՆԻ ԱՍՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծնթգ.	2021թ.	2020թ.
Միջոցների իրացումից եկամուտ	7	92,574	142,908
Անսահմանափակ օգտագործման նվիրատվություններից մուտքեր		-	25,270
Համախառն եկամուտ		92,574	168,178
Ծրագրային ծախսեր	7	(92,574)	(142,908)
Անձնակազմի ծախսեր		(59,073)	(91,152)
Վարչական ծախսեր	8	(32,332)	(39,311)
Արժեզրկման կորուստների գծով պահուստի վերականգնում		5,655	(37,781)
Գործառնական գործունեության զուտ ծախսեր		(85,750)	(142,974)
Ֆինանսական եկամուտ	12	15,451	23,916
Արտարժույթի փոխարկումից օգուտներ՝ հանած վնասներ		(33,573)	45,780
Վնաս մինչև հարկումը		(103,872)	(73,278)
Շահութահարկի գծով ծախս	9	(5,857)	(4,359)
ՏԱՐՎԱ ՎՆԱՍ		(109,729)	(77,637)
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱԴԱՐՓԱԿ ՎՆԱՍ		(109,729)	(77,637)

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2022թ. հունիսի 30 -ին:



Գարին Եսայանյան
Փոխտնօրեն

[Handwritten Signature]
Հայկ Անտոնյան
Գլխավոր հաշվապահ

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծնթզ.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	10	41,248	69,335
Ոչ նյութական ակտիվներ		277	-
Ժամկետային ավանդներ	12	296,340	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		337,865	69,335
Ընթացիկ ակտիվներ			
Կապիտալացված շինարարական աշխատանքներ	11	784,319	784,319
Պաշարներ		3,608	2,813
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		1,027	20,312
Ժամկետային ավանդներ	12	-	473,192
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13	35,421	27,085
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		824,375	1,307,721
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		1,162,240	1,377,056
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Հետաձգված հասույթ	14	967,269	1,059,323
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	8,008	14,863
Ստացված փոխառություններ		-	4,800
Ակտիվների վերաբերող շնորհներ		8,190	11,067
Վճարվելիք շահույթահարկ		5,858	4,359
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		989,325	1,094,412
ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		172,915	282,644

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Չուտ ակտիվներ
Առ 1 հունվարի 2020թ.	360,281
Տարվա վնաս	(77,637)
ԸՆԴԱՍԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՍՏՊԱՐՓԱԿ ՎՆԱՍ	(77,637)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	282,644
Տարվա վնաս	(109,729)
ԸՆԴԱՍԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՍՏՊԱՐՓԱԿ ՎՆԱՍ	(109,729)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	172,915

«ԵՐԵՎԱՆ ԻՍ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ճնթգ.	2021թ.	2020թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Նվիրատվություններից մուտքեր		520	46,744
Ծրագրային ծախսերի գծով վճարումներ		(47,507)	(122,158)
Աշխատակիցներին տրվող վճարներ		(85,013)	(104,952)
Վարչական և այլ ծախսերի գծով վճարներ		(27,955)	(71,504)
Կապիտալացված շինարարական աշխատանքների գծով վճարումներ		-	-
Վաճառված նյութերից մուտքեր		800	1,073
Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ		(159,155)	(250,797)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Չուտ մարված ավանդներ		159,711	175,672
Ստացված տոկոսներ ժամկետային ավանդների գծով		46	28,832
Ստացված փոխառություններ		-	4,800
Փոխառությունների մարում		(4,800)	-
Հիմնական միջոցների ձեռքբերում		-	(5,374)
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտներ		14,495	-
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		169,452	203,930
Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(1,962)	45,806
Չուտ փոփոխություն դրամական միջոցներում և դրանց համարժեքներում		8,335	(1,061)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		27,085	28,146
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	12	35,421	27,085

1 Հիմնադրամը և նրա գործունեությունը

«Երևան իմ սեր» հիմնադրամի (այսուհետ՝ «Հիմնադրամ») գործունեությունն ուղղված է Երևանի ճարտարապետական մշակութային ժառանգության վերականգնմանն ու պահպանմանը, կրկին կիրառելի դարձնելով շենքերը՝ հաշմանդամ երեխաների, երիտասարդների և անապահով ընտանիքների կենսապայմանները և կյանքի որակը բարելավելու նպատակով:

Սա հավակնոտ բարեգործական ծրագիր է, որն ունի երկու հիմնական նպատակ.

Վերականգնում և վերակառուցում. պահպանել և վերականգնել Երևանի պատմական թաղամասերը և համակարգել ջանքերը՝ փրկելու 3000-ամյա քաղաքի մշակութային և ճարտարապետական ժառանգությունը, վերջինիս ավանդույթները և մերձակայքը: Վերականգնել պատմական շինությունները և հարմարեցնել դրանք նոր և լուսավոր նպատակների համար, սակայն ամենից գլխավորը՝ մարդկանց, նրանց կենսապայմանները և կյանքի որակը պլանավորման առանցքում պահելն է:

Սոցիալական ազդեցություն. բարելավել երեխաների, երիտասարդների, հատկապես՝ ծնողազուրկների և սոցիալապես խոցելի համայնքների անդամների կրթությունը և կենսափորձը, օգնել սոցիալապես և առողջապես խոցելի երեխաներին ու երիտասարդներին՝ աջակցելով նրանց առօրյա կյանքում վստահություն և ինքնուրույնություն ձեռք բերել:

«Երևան իմ սեր» հիմնադրամը ստեղծվել է Արմեն Սարգսյանի և նրա ընտանիքի կողմից: Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Բաղրամյան 24:

Հիմնադրամի աշխատանքների կառավարումը և վերջնական վերահսկողությունն իրականացվում է Հոգաբարձուների խորհրդի կողմից: Հիմնադրամը նվիրատվություններ է ստանում իր հիմնադրից, ՀՀ և օտարերկրյա բիզնեսներից ու անհատներից:

Հիմնադրամի աշխատակիցների թիվը առ 31 դեկտեմբերի 2021թ. կազմել է 8 (առ 31 դեկտեմբերի 2020թ.՝ 21):

2 Հիմնադրամի գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետություն. Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ունենալ տարաբնույթ մեկնաբանումներ (Ծանոթագրություն 20): Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա Էական ազդեցություն ունի Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, և Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն տեղի են ունենում դրամական միջոցների զգալի հոսքեր: Հետևաբար, տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառայած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և կորպորատիվ ոլորտների վրա:

COVID-19. 2020թ. մարտին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի բռնկումը որակեց որպես համաշխարհային համավարակ: Ի պատասխան համավարակի՝ Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկվել են COVID-19-ի տարածման և ազդեցության գսպման ուղղված մի շարք միջոցառումներ, ինչպիսիք են՝ ճանապարհորդության արգելքները և սահմանափակումները, կարանտինները, ինքնամեկուսացումը, ձեռնարկատիրական գործունեության սահմանափակումները, ընդհուպ ձեռնարկությունների փակումը: Վերոնշյալ միջոցներից մի քանիսը հետագայում մեղմացվել են, սակայն 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարակի համաշխարհային մակարդակը մնում է բարձր, պատվաստումների մակարդակը համեմատաբար ցածր է, և կա ռիսկ, որ Հայաստանի իշխանությունները լրացուցիչ սահմանափակումներ կկիրառեն հետագա ժամանակաշրջաններում, այդ թվում՝ պայմանավորված վիրուսի նոր տարբերակների ի հայտ գալով:

2021թ. Հայաստանի տնտեսությունը դրսևորել է համավարակի հաղթահարման դրական դինամիկա. Նման դինամիկայի համար նաև նպաստավոր են եղել համաշխարհային տնտեսության վերականգնումը և համաշխարհային ապրանքային շուկաներում գների բարձրացումը: Այդուհանդերձ, Հայաստանում և գլոբալ որոշ շուկաներում գների բարձրացումը նաև նպաստում են Հայաստանում գնաճին:

2 Հիմնադրամի գործառնական միջավայրը (շարունակություն)

Ներկայիս տնտեսական իրավիճակի հետագա հետևանքները և Կառավարության ձեռնարկած միջոցառումները դժվար է կանխատեսել, և ղեկավարության ներկայիս ակնկալիքները և գնահատականները կարող են տարբերվել փաստացի արդյունքներից:

Ակնկալվող պարտքային կորուստներ. Հիմնադրամի վարկերի, դեբիտորական պարտքերի և համանման ակտիվների ակնկալվող պարտքային կորուստների չափման նպատակով Հիմնադրամն օգտագործում է հիմնավորելի կանխատեսումային տեղեկատվություն, ներառյալ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումներ: Այնուամենայնիվ, ինչպես ցանկացած տնտեսական կանխատեսումներում, այս կանխատեսումների գծով ևս՝ ենթադրությունները և դրանց տեղի ունենալու հավանականությունը բնորոշվում է անորոշության բարձր աստիճանով, ուստի փաստացի արդյունքները կարող են եսպես տարբերվել կանխատեսումներից:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն

Պատրաստման հիմունքները: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՅՄՍ») պահանջներին համապատասխան, սկզբնական արժեքի հիմունքով: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական սկզբունքները ներկայացված են ստորև: Այս սկզբունքները հետևողականորեն կիրառվել են հաշվետու բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ կերպ նշված չէ:

ՖՅՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականների օգտագործում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Դատողությունները և գնահատականները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, ներկայացված են ծանոթագրություն 4-ում:

Անընդհատության հիմունք: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքով:

31 Դեկտեմբերի 2021թ.-ի դրությամբ ընթացիկ պասիվները գերակշռում են ընթացիկ ակտիվներին 164,950 հազար ՀՀ դրամ: Հիմնադրամի ղեկավար անձնակազմը պլանավորում է ֆինանսավորել գործունեությունը օգտագործելով բանկային ավանդը (որը հասանելի է օգտագործման համար), ինչպես նաև ներգրավել նոր նվիրատվություններ 2022թ.-ի ընթացքում:

Արտարժույթի փոխարկում: Հիմնադրամի գործառնական արժույթը հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որում Հիմնադրամը գործում է: Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ ՀՀ դրամը:

Գործարքներ և մնացորդներ: Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են կազմակերպության ֆունկցիոնալ արժույթի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ-ի՝ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով Հիմնադրամի ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից եկամուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափված ոչ դրամական հոդվածները, ներառյալ սեփական կապիտալի ներդրումները, փոխարկվում են իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ հաստատված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափվող ոչ դրամական հոդվածների վրա արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը գրանցվում է որպես իրական արժեքի շահույթի կամ վնասի մաս:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Առ 31 դեկտեմբերի 2021թ. դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 480.14 ՀՀ դրամ (2020թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 522.59 ՀՀ դրամ):

Հիմնական միջոցներ: Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Հետագա ծախսերը ընդգրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքում կամ ճանաչվում են որպես առանձին ակտիվ, անհրաժեշտության դեպքում, միայն այն ժամանակ, երբ հավանական է, որ հողվածի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ, և այդ հողվածի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում: Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հայտանիշ: Եթե որևէ նման հայտանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը՝ օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Նախորդ տարիների ընթացքում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոփոխություններ են տեղի ունեցել գնահատումներում, որոնք կիրառվել են ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը որոշելու համար:

Հիմնական միջոցների օտարումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից ստացված հասույթի և հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Մաշվածություն: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը:

Գրասենյակային սարքավորումներ 3-ից 5 տարի
Փոխադրամիջոցներ 8 տարի

Ակտիվի մնացորդային արժեքը այն գնահատված գումարն է, որը Հիմնադրամը ներկա պահին կստանա ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լինելու դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվի մնացորդային արժեքը և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական գործիքներ. չափման հիմնական մոտեցումները: Իրական արժեքն այն գինն է, որը կարող է ստացվել ակտիվը վաճառելու կամ պարտավորություն փոխանցելու համար՝ չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում: Իրական արժեքի լավագույնն ապացույցը ակտիվ շուկայում իրականացվող գնանշումն է: Ակտիվ շուկան այն շուկան է, որտեղ ակտիվի կամ պարտավորության հետ գործարքները իրականացվում են բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով, ինչը թույլ է տալիս մշտապես տեղեկատվություն ստանալ չափման վերաբերյալ:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես գումար, որը ստացվում է յուրաքանչյուր ակտիվի կամ պարտավորության շուկայական գնանշումը բազմապատկելով Հիմնադրամի կողմից պահվող գործիքների քանակով: Չափումը այդպես է կատարվում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական ամենօրյա շրջանառությունը բավարար չէ Հիմնադրամի կողմից ունեցած ակտիվների և պարտավորությունների քանակը կլանելու համար, իսկ առանձին գործարքով դիրքերը վաճառելու պատվերներ դնելը կարող է ազդել շուկայական գնանշման վրա:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Այն ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշելու համար, որոնց գործարքների գների վերաբերյալ շուկայական տեղեկատվությունը մատչելի չի, օգտագործվում են չափման մոդելներ, ինչպիսիք են գեղջված դրամական միջոցների հոսքի մոդելը, ինչպես նաև շուկայական պայմաններով իրականացվող նմանատիպ գործարքների տվյալների վրա հիմնված մոդելները կամ ներդրման օբյեկտի ֆինանսական տվյալների դիտարկումը: Իրական արժեքի չափումների արդյունքները վերլուծվում և բաշխվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների հետևյալ կերպ. (i) 1-ին մակարդակը ներառում է նույնանման ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գործող շուկայական գնանշումների (չճշգրտվող) հիման վրա կատարվող չափումները, (ii) 2-րդ մակարդակը ներառում է մոդելների հիման վրա ստացված չափումները, որոնցում օգտագործված բոլոր նշանակալի մուտքերը ուղղակիորեն են (օրինակ, գին) կամ անուղղակիորեն (օրինակ, գնի հիման վրա հաշվարկված) դիտարկվում են ակտիվի կամ պարտավորության համար, և (iii) 3-րդ մակարդակի չափումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտարկվող տվյալների վրա (այսինքն՝ չափման համար պահանջվում է չդիտարկվող մուտքերի զգալի քանակ): Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումները համարվում են, որ տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Գործարքի հետ կապված ծախսերը հավելյալ ծախսեր են, որոնք ուղղակիորեն վերագրվում են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսերն այն ծախսերն են, որոնք գործարքի չկատարման դեպքում չէին առաջանա: Գործարքի հետ կապված ծախսերը ներառում են հատուցումներ, որոնք վճարվել են գործակալներին (ներառյալ՝ որպես առևտրային գործակալներ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, բրոքերներին և դիլերներին, կարգավորող մարմիններին և ֆոնդային բորսաներին տրված վճարները, ինչպես նաև գույք փոխանցելու համար գանձվող հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսերը չեն ներառում պարզևավճարներ կամ պարտքային պարտավորությունների գծով գեղջեր, ֆինանսավորման ծախսեր, ներքին վարչական ծախսեր կամ պահպանման ծախսեր:

Ամորտիզացված արժեքը ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական գործիքը չափվել է սկզբնական ճանաչման պահին, հանած մայր գումարը մարելու վճարները և ավելացրած հաշվեգրված տոկոսների չափով, իսկ ֆինանսական ակտիվների համար՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների համար նախատեսված ցանկացած պահուստ: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման պահին գործարքի հետ կապված հետաձգված ծախսերի, ինչպես նաև վճարման ենթակա գումարի ցանկացած հավելավճարի կամ գեղջի ամորտիզացիան՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտները և հաշվեգրված տոկոսային ծախսերը, ներառյալ կուտակված կուպոնի եկամուտը և ամորտիզացված գեղջը կամ պրեմիան (ներառյալ տրամադրման ժամանակ հետաձգված միջնորդավճարը, եթե այդպիսին առկա է), ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն ներկայացվում առանձին, այլ ընդգրկվում են համապատասխան հոդվածների հաշվեկշռային արժեքի կազմում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը գործիքների հաշվեկշռային արժեքի յուրաքանչյուր ժամանակաշրջանում հաստատուն տոկոսադրույքն ապահովելու նպատակով՝ համապատասխան ժամանակաշրջանում տոկոսային եկամուտների կամ տոկոսների ծախսերի բաշխման եղանակն է: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը կիրառվում է ֆինանսական գործիքների գոյության ակնկալվող ժամանակաշրջանի կամ, անհրաժեշտության դեպքում, ավելի կարճ ժամանակաշրջանի ընթացքում ճշգրիտ ապագա դրամական ներհոսքերի կամ արտահոսքերի (չներառելով ապագա վարկային վնասները) մինչև ֆինանսական գործիքի համախառն հաշվեկշռային արժեք գեղջեիս: Արդյունավետ տոկոսադրույքն օգտագործվում է փոփոխուն տոկոսադրույքով գործիքների դրամական հոսքերը մինչև տոկոսադրույքի փոփոխման հաջորդ ամսաթիվը գեղջելու համար, բացառությամբ պարզևավճարի կամ գեղջի, որոնք արտացոլում են տվյալ գործիքի համար նշված փոփոխուն դրույքով վարկի տարածումը կամ վերաբերում են այլ փոփոխական գործոններին, որոնք սահմանված են՝ անկախ շուկայական արժեքից: Նման պարզևավճարները կամ գեղջերը ամորտիզացվում են գործիքի ակնկալվող գոյության ընթացքում:

Ներկա արժեքի հաշվարկը ներառում է պայմանագրով կողմերի կողմից վճարված կամ ստացված բոլոր վճարներն ու գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեգրված (ՓՕՈ) ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ ակտիվների համար արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է՝ հաշվի առնելով պարտքային ռիսկը, այսինքն՝ հաշվարկվում է սկզբնական ճանաչման ժամանակ ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա, և ոչ թե պայմանագրային դրամական հոսքերի հիման վրա:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Ֆինանսական գործիքներ, սկզբնական ճանաչում: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Բոլոր մյուս ֆինանսական գործիքներն սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքը լավագույնս ներկայացվում է գործարքի գնով: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթը կամ վնասը գրանցվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է բացահայտվել միևնույն գործիքում դիտարկելի շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի մուտքային տվյալները ներառում են միայն դիտարկելի շուկայական տվյալները: Ամորտիզացված արժեքով գնահատվող ֆինանսական ակտիվների և պարտքային գործիքներում իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող ներդրումների սկզբնական ճանաչումից հետո ստեղծվում է ակնկալվող պարտքային կորուստների գծով գնահատված պահուստ, որը հանգեցնում է հաշվապահական վնասի ճանաչման ակտիվի սկզբնական ճանաչումից անմիջապես հետո:

Ֆինանսական ակտիվների բոլոր գնումներն ու վաճառքները, որոնց դրույթները պահանջում են այդ ակտիվի առաքումը՝ տվյալ շուկայում սովորական կանոններով կամ ընդունված կարգով սահմանված ժամկետներում (կանոնավոր կերպով գնում կամ վաճառք), ճանաչվում են առևտրի ամսաթվով, որն այն ամսաթիվն է, երբ Հիմնադրամը հանձնառություն է ստանձնում առաքել ֆինանսական ակտիվը: Մնացած բոլոր գնումները ճանաչվում են, երբ հիմնադրամը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներ, դասակարգում և հետագա չափում, չափման կատեգորիաներ: Հիմնադրամը դասակարգում է ֆինանսական ակտիվները՝ կիրառելով չափման հետևյալ կատեգորիաները. իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող և ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Պարտքային ֆինանսական ակտիվների դասակարգումն ու հետագա չափումը պայմանավորված է՝ (i) Հիմնադրամի՝ համապատասխան ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելով և (ii) ակտիվներում դրամական միջոցների հոսքերի բնութագրերով:

Ֆինանսական ակտիվներ, դասակարգում և հետագա չափում, բիզնես մոդել: Բիզնես մոդելն իր մեջ ներառում է այն մեթոդը, որը Հիմնադրամը կիրառում է ֆինանսական ակտիվների կառավարման համար՝ դրամական միջոցների հոսքեր ստանալու նպատակով: Հիմնադրամի նպատակն է (i) միայն ակտիվներից պայմանագրային դրամական միջոցների հոսքերի ստացումը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքեր ձեռք բերելու համար»), կամ (ii) պայմանագրային և ակտիվների վաճառքի արդյունքում դրամական միջոցների հոսքերի ստացումը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքեր ձեռք բերելու և վաճառքի համար»), կամ, եթե և (i) կետը և (ii) կետը կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «այլ» բիզնես մոդել և գնահատվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բիզնես մոդելը որոշվում է Հիմնադրամի ակտիվների խմբի համար (պորտֆելի մակարդակով)՝ հաշվի առնելով գործունեության իրականացման բոլոր համապատասխան ապացույցները, որը Հիմնադրամը մտադիր է իրականացնել իր նպատակին հասնելու համար, որը սահմանվել է գնահատման իրականացման ամսաթվին առկա պորտֆելի համար:

Ֆինանսական ակտիվներ, դասակարգում և հետագա չափում, դրամական միջոցների հոսքերի բնութագրեր: Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահումը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր ձեռք բերելու կամ պայմանագրային դրամական միջոցների հոսքեր ձեռք բերելու և վաճառքի նպատակով, Հիմնադրամը գնահատում է, թե արդյոք դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ («Միայն մայր գումարի և տոկոսի վճարումների թեստ» կամ «ՄՄՉՏՎ թեստ»): Ֆինանսական ակտիվները պարունակվող ածանցյալ գործիքների հետ դիտարկվում են համակցության մեջ՝ որոշելու համար, թե արդյոք դրանց դիմաց կատարված դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են բացառապես մայր գումարի և տոկոսների հաշվին մարումներ: Այս գնահատումը իրականացնելիս Հիմնադրամը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային պայմանագրի պայմաններին, այսինքն, արդյոք տոկոսները ներառում են միայն պարտքային ռիսկի, փողի ժամանակային արժեքի, բազային վարկային պայմանագրի հիմքում ընկած այլ ռիսկերի և շահույթի մարժայի փոխհատուցում:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Եթե պայմանագրի պայմանները ելթադրում են ռիսկի կամ անկայունության ազդեցություն, որոնք չեն համապատասխանում բազային վարկային պայմանագրի պայմաններին, ապա համապատասխան ֆինանսական ակտիվը դասակարգվում և գնահատվում է իրավական արժեքով՝ շահույթի և վնասի միջոցով: Միայն մայր գումարի և տոկոսի վճարումների թեստն իրականացվում է ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ, և հետագա վերագնահատում չի իրականացվում:

Ֆինանսական ակտիվներ. վերադասակարգում. Ֆինանսական գործիքները վերադասակարգվում են միայն այն դեպքում, երբ փոփոխվում է պորտֆելը կառավարող բիզնես մոդելն ամբողջությամբ: Վերադասակարգումը կիրառվում է առաջընթաց կերպով՝ առաջին հաշվետու ժամանակաշրջանի սկզբից՝ բիզնես մոդելի փոփոխությունից հետո:

Ֆինանսական ակտիվներ. արժեզրկում. ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ: Հիմնադրամը կանխատեսում է հիմունքներով գնահատում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների, վարկավորման հանձնառություններից կամ ֆինանսական երաշխավորության պայմանագրերից առաջացող համախառն դիրքի ակնկալվող պարտքային կորուստները: Հիմնադրամը չափում է ակնկալվող պարտքային կորուստը և ճանաչում է ֆինանսական կամ պայմանագրային ակտիվների գույն արժեզրկման կորուստները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը արտացոլում է. (i) անկողմնակալ և հավանականությամբ կշռված գումար, որը որոշվում է՝ գնահատելով հնարավոր արդյունքների տիրույթը, (ii) փողի ժամանակային արժեքը և (iii) անցյալ դեպքերի, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ ողջամիտ և հիմնավորվող տեղեկատվություն, որը հասանելի է առանց չափազանց ծախսումների կամ ջանքերի հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները և պայմանագրային ակտիվները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գույն ակնկալվող պարտքային կորուստներից: Փոխառությունների գծով հանձնառությունների և ֆինանսական երաշխավորության պայմանագրերի համար առանձին ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ձևավորվում՝ որպես պարտավորություն՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների համար ամորտիզացված արժեքի փոփոխությունները՝ գույն ակնկալվող պարտքային կորուստներից, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Հիմնադրամը կիրառում է ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի չափման պարզեցված մոտեցում: Մնացած ֆինանսական ակտիվների համար Հիմնադրամը կիրառում է հետևյալ արժեզրկման եռաստիճան մոդելը՝ հիմնված վարկային ռիսկի փոփոխությունների վրա սկզբնական ճանաչման պահից: Ֆինանսական ակտիվը, որը արժեզրկված չէ սկզբնական ճանաչման պահին, դասակարգվում է առաջին մակարդակում: Առաջին մակարդակում գտնվող ֆինանսական ակտիվների ակնկալվող պարտքային կորուստները չափվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար, որոնք բխում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվին հաջորդող 12 ամիսների ընթացքում հնարավոր անվճարունակության դեպքերից (12-ամսյա ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների գումար): Եթե Հիմնադրամն արձանագրում է սկզբնական ճանաչման պահից ի վեր պարտքային ռիսկի նշանակալի աճի, ակտիվը տեղափոխվում է երկրորդ մակարդակ և նրա ակնկալվող պարտքային կորուստը չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների չափով, որը մինչև պայմանագրային ժամկետի ավարտն է («ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ»): Պարտքային ռիսկի նշանակալի աճի նկարագրությունը ներկայացված է ծանոթագրություն 16-ում: Եթե Հիմնադրամը գնահատում է ֆինանսական ակտիվը որպես արժեզրկված, ակտիվը տեղափոխվում է երրորդ մակարդակ և ակնկալվող պարտքային կորուստը չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների չափով:

Ֆինանսական ակտիվներ. դուրսգրում: Ֆինանսական ակտիվները դուրս են գրվում ամբողջությամբ կամ մասամբ, երբ Հիմնադրամը սպառել է դրանց հավաքագրման բոլոր գործնական հնարավորությունները և եկել է այն եզրակացության, որ նման ակտիվների հատուցման ակնկալիքները հիմնավորված չեն: Դուրս գրումը իրենից ներկայացնում է ճանաչման դադարեցում: Հիմնադրամը կարող է դուրս գրել այն ֆինանսական ակտիվներ, որոնց վերաբերյալ դեռևս ձեռնարկվում են հարկադիր կատարողական միջոցառումներ, երբ Հիմնադրամը փորձում է հավաքագրել պայմանագրով նախատեսված պարտքի գումարները, չնայած որ այն չունի հիմնավորված ակնկալիքներ դրանց հավաքագրումից:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ. ապաճանաչում: Հիմնադրամը ապաճանաչում է ֆինանսական ակտիվները (ա) երբ այդ ակտիվները վերադարձվում են, կամ այդ ակտիվների հետ կապված դրամական միջոցների հոսքի ժամկետն ավարտվել է, կամ (բ) Հիմնադրամը փոխանցել է դրամական միջոցների հոսքի իրավունքը ֆինանսական ակտիվներից կամ կնքել է ռիսկերի և հատույցների փոխանցման պայմանագիր, և (i) փոխանցել է նաև գրեթե բոլոր ռիսկերը և հատույցները, որոնք կապված են այդ ակտիվների սեփականության հետ, կամ (ii) ո՛չ փոխանցել և ո՛չ էլ պահպանել է գրեթե բոլոր ռիսկերը և հատույցները, որոնք կապված են այդ ակտիվների սեփականության հետ, բայց կորցրել է այդ ակտիվների նկատմամբ վերահսկողությունը:

Վերահսկողությունը պահպանվում է, եթե գործընկերը չունի չկապակցված երրորդ կողմին ակտիվը ամբողջությամբ վաճառելու հնարավորություն՝ առանց վաճառքի սահմանափակումներ կիրառելու:

Ֆինանսական ակտիվներ. վերափոխում: Երբեմն Հիմնադրամը վերաբանակցում կամ այլ կերպ վերափոխում է ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմանները:

Այն դեպքում, երբ վերաբանակցումը պայմանավորված է գործընկերոջ ֆինանսական դժվարություններով և պայմանագրային վճարումները չկատարելու կարողությամբ, Հիմնադրամը համեմատում է սկզբնական և վերափոխված դրամական միջոցների հոսքերը, որպեսզի հասկանա, արդյոք ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները Եականորեն տարբերվում են պայմանագրային վերափոխման արդյունքում: Եթե ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները չեն փոխվում, վերափոխված ակտիվը Եականորեն չի տարբերվում սկզբնական ակտիվից և վերափոխումը չի հանգեցնում ապաճանաչման: Հիմնադրամը հաշվարկում է համախառն հաշվեկշռային արժեքը գեղչելով վերափոխված պայմանագրային դրամական միջոցների հոսքերը ըստ սկզբնական տոկոսադրույքի (կամ պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ սկզբնական ճանաչման պահի սկսած) և ճանաչում է վերափոխումից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ. չափման կատեգորիաներ: Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում՝ ամորտիզացված արժեքով չափվող, բացառությամբ. (i) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններից: Այս դասակարգումը վերաբերում է ածանցյալ ֆինանսական գործիքներին, առևտրային նպատակով պահվող ֆինանսական պարտավորություններին (օրինակ, արժեթղթերի կարճ դիրքեր), պայմանական հատուցմանը, որը բիզնեսի միավորման ժամանակ ճանաչվում է ձեռք բերողի կողմից և սկզբնական ճանաչման պահին որպես այսպիսին սահմանված այլ ֆինանսական պարտավորություններին; և (ii) ֆինանսական երաշխավորության պայմանագրերի և փոխատվության հանձնառությունների:

Ֆինանսական պարտավորություններ. ապաճանաչում Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պահից (այսինքն, երբ պայմանագրում նշված պարտավորությունը կատարվել կամ դադարեցվել է, կամ լրացել է դրա կատարման ժամկետը):

Հիմնադրամի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակությունը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Պայմանները, ըստ Էուլթյան, տարբեր են, եթե նոր պայմաններով դրամական միջոցների հոսքերի գեղչված ներկա արժեքը, ներառյալ վճարված վճարները զուտ ստացված վճարներով և գեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, նվազագույնը 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացած դրամական միջոցների հոսքերի գեղչված ներկա արժեքից:

Եթե պարտքային գործիքների փոխանակումը կամ պայմանների փոփոխումը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճանաչվում է որպես մարումից օգուտի կամ կորստի մաս: Եթե փոխանակումը կամ պայմանների փոփոխումը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսում կամ վճար ճշգրտում է պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում փոփոխված պարտավորության մնացորդային ժամանակահատվածում:

Պարտավորությունների վերափոխումները, որոնք չեն հանգեցնում մարման, հաշվառվում են որպես գնահատականի փոփոխություն կիրառելով կուտակային մեթոդ և ճանաչելով օգուտ կամ կորուստը շահույթի կամ վնասի կազմում, բացի այն դեպքերից, երբ տարբերության տնտեսական Էությունը ներառվում է սեփականատերերի կապիտալ գործարքների կազմում:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Ֆինանսական գործիքներ, հաշվանցում: Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն արտացոլում է զուտ գումարը միայն այն դեպքերում, երբ առկա է արտացոլված գումարները հաշվանցելու իրավաբանորեն հաստատված իրավունք, ինչպես նաև՝ մտադրություն կամ կատարելի հաշվանցում կամ էլ միաժամանակ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը: Հաշվանցման դիտարկվող իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա հնարավոր իրադարձություններից, և (բ) պետք է իրավաբանորեն հնարավոր լինի կատարել հետևյալ հանգամանքներում: (i) սովորական ֆինանսա-տնտեսական գործունեության իրականացման ընթացքում, (ii) վճարման պարտավորությունների չկատարման դեպքում (դեֆոլտի իրադարձություն) և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցայսհանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, որովհետև (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման համար և այդ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են, և (ii) դրանք չեն դասակարգվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Այն առանձնահատկություններ, որոնք պարտադիր են համաձայն օրենսդրության, ինչպիսիք են որոշ երկրներում գրավադրման մասին օրենսդրությունը, չունեն ազդեցություն միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսների վճարումների թեստի վրա, բացի այն դեպքերից, երբ դրանք ներառված են պայմանագրային պայմաններում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր: Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, երբ կոնտրագենտը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Կապիտալացված շինարարական աշխատանքներ: Կապիտալ նախագծերի ծախսերը, որի մեջ մտնում են շինակառուցման, աշխատուժի և այլ հարակից ծախսերը, կուտակվում/կապիտալացվում են Հիմնադրամի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության՝ «կապիտալացված շինարարական աշխատանքներ» տողում, քանի դեռ շինարարությունը չի ավարտվել և նախատեսված են նվիրատվության համար: Շինարարության այս կապիտալացված ծախսերը դիտարկվում են որպես Հիմնադրամի ընթացիկ ակտիվներ և հաշվեգրվում են սկզբնական արժեքով:

Շինության նվիրատվության ժամանակ Հիմնադրամը դուրս կգրի կուտակված կապիտալացված շինարարական ծախսերը և համապատասխան եկամուտը՝ որպես նվիրատվություններից ստացված եկամուտ:

Հետաձգված հասույթ: Սահմանափակ օգտագործման պայմաններով ստացված նվիրատվությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված հասույթ: Դրանք ճանաչվում են որպես հասույթ՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ ըստ ծրագրերի իրականացման ծախսերի, ինչի նպատակով էլ ստացվել էին նվիրատվությունները: Շինարարական աշխատանքների գծով հետաձգված հասույթը ճանաչվում է որպես հասույթ՝ ավարտուն վիճակում ծրագրի հանձնման պահին: Սահմանափակում չունեցող նվիրատվություններից միջոցների մուտքը ուղղակիորեն ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում:

Հատուցումներ աշխատակիցներին: Աշխատավարձը, տարեկան վճարովի արձակուրդը, հիվանդության պատճառով բացակայությունը և պարգևավճարները հաշվեգրվում են այն տարում, երբ տվյալ հատուցումները որոշող համապատասխան ծառայությունները մատուցվել են Հիմնադրամի աշխատակիցների կողմից: Պետական կենսաթոշակային և սոցիալական ապահովության ֆոնդերին հատկացումներից բացի, Հիմնադրամը չունի կենսաթոշակային կամ համանման այլ վճարումներ կատարելու իրավական պարտավորություն:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Շահութահարկ: Շահութահարկը ներկայացվում է ֆինանսական հաշվետվություններում համաձայն օրենսդրության, որն, ըստ Էուլթյան, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ճանաչվում է այլ համապարփակ եկամտում կամ անմիջապես սեփական կապիտալում, քանի որ վերաբերում է այնպիսի գործարքների, որոնք տվյալ կամ այլ ժամանակաշրջանում ճանաչվում են այլ համապարփակ եկամտում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ելթակա է վճարման կամ հարկային մարմիններից փոխհատուցման և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Հարկվող շահույթը կամ վնասը հիմնվում է գնահատականի վրա, եթե ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են հարկային հայտարարագրերի ներկայացումից հետո: Շահութահարկից տարբերվող այլ հարկերը, ճանաչվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս:

Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային մնացորդները չափվում են կիրառելով հարկային դրույքները, որոնք, ըստ Էուլթյան, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվը գրանցվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք չեզոքացնել ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց և, երբ հետաձգված շահութահարկի ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է Նույն հարկային մարմնի կողմից Նույն հարկվող անձից կամ տարբեր հարկատուներից, որտեղ կա մնացորդները գուտ հիմունքով կարգավորելու մտադրություն:

Հասույթի ճանաչում: Հիմնադրամի եկամտի աղբյուր է հանդիսանում Հիմնադրամի հիմնական գործունեությունից առաջացող եկամուտը: Հասույթը ճանաչվում է գործարքի գնի չափով: Գործարքի գինը հատուցման այն գումարն է, որը Հիմնադրամն ակնկալում է ստանալ, որպես փոխանակում, գնորդին խոստացված ապրանքները կամ ծառայությունները փոխանցելու դիմաց, բացառությամբ երրորդ կողմերի անունից հավաքագրված գումարները:

Տոկոսային եկամուտ: Տոկոսային եկամուտը ճանաչվում է բոլոր պարտքային գործիքների համար հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այս մեթոդը հետաձգում է, որպես տոկոսային եկամտի մաս, կողմերից ստացված պայմանագրին վերաբերող ամբողջ վճարը, որը հանդիսանում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի անբաժանելի մաս: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդին վերաբերող վճարներ են հանդիսանում սկզբնավորման վճարները՝ ստացված կամ վճարված Հիմնադրամի կողմից, որոնք կապված են ֆինանսական ակտիվի ստեղծման կամ գնման հետ, օրինակ, վճարունակության գնահատման վճարներ, երաշխիքների կամ գրավների գնահատման և գրանցման վճարներ, գործիքի պայմանների բանակցման և գործարքի փաստաթղթերի կազմման վճարներ:

3 Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականություն (շարունակություն)

Այն ֆինանսական ակտիվների համար, որոնք գնված կամ սկզբնավորված պարտքային-արժեզրկված ֆինանսական ակտիվներ են, Հիմնադրամը պետք է կիրառի պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ սկզբնական ճանաչման պահից սկսած: Արդյունքում ստացվում է պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք:

Տոկոսային եկամուտը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի նկատմամբ, բացառությամբ (i) ֆինանսական ակտիվների, որոնք դարձել են պարտքային-արժեզրկված և որոնց համար տոկոսային հասույթը հաշվարկվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը դրանց ամորտիզացված արժեքի նկատմամբ՝ զուտ ակնկալվող պարտքային կորուստներից, և (ii) գնված կամ սկզբնավորված պարտքային-արժեզրկված ֆինանսական ակտիվների, որոնց համար սկզբնավորման պարտքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է դրանց ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն: Թողարկումից հետո այս ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխություն պահանջում է Հիմնադրամի ղեկավարության հաստատումը, ով հաստատել է այս ֆինանսական հաշվետվությունների թողարկումը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականներ և դատողություններ

Հիմնադրամը կատարում է գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում: Բնականոն գործունեության ընթացքում Հիմնադրամը գործարքի մեջ է մտնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում հիմնված նրանց իրական արժեքի վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա ակտիվ շուկա այդպիսի գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում նմանատիպ գործարքների գնահատումը չկապակցված կողմերի հետ և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են ծանոթագրություն 20-ում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ: Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատականը հիմնված է դատողության վրա՝ ելնելով նմանատիպ ակտիվների հետ ունեցած փորձից: Ակտիվի մեջ մարմնավորված տնտեսական օգուտները Հիմնադրամը սպառում է գլխավորապես դրա օգտագործման միջոցով: Այնուամենայնիվ, այլ գործոններ, ինչպիսիք են տեխնիկական կամ կոմերցիոն հնացածությունը, պարապուրդի ընթացքում ֆիզիկապես մաշվելը, հաճախ պատճառ են դառնում այն տնտեսական օգուտների նվազման, որոնք կարող էին ստացվել ակտիվից: Դեկավարությունը գնահատում է օգտակար ծառայության ժամկետի մնացորդը համաձայն ակտիվների ընթացիկ տեխնիկական վիճակի և ակնկալվող ժամկետի, որի ընթացքում ակնկալվում է ստանալ տնտեսական օգուտներ տվյալ ակտիվից: Հաշվի են առնվում հետևյալ առաջնային գործոնները.

(ա) ակտիվի ակնկալվող օգտագործում, (բ) տեխնիկական հնացածություն, որը կախված է գործառնական գործոններից և սպասարկման ծրագրից, և (գ) տեխնիկական և կոմերցիոն հնացածություն, որն առաջանում է շուկայական պայմանների փոփոխություններից:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Եական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Եթե ակնկալվող օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն դեկավարության գնահատականից 10%-ով, մաշվածության վրա ազդեցությունը առ 31 դեկտեմբերի 2021թ. կկազմի աճ՝ 1,761 հազ. ՀՀ դրամով կամ նվազում՝ 1,761 հազ. ՀՀ դրամով (2020թ.: աճ 1,852 հազ. ՀՀ դրամով կամ նվազում 1,852 հազ. ՀՀ դրամով):

Կապիտալացված շինարարական աշխատանքներ, իրացման զուտ արժեք: Կապիտալացված շինարարական աշխատանքներն իրենցից ներկայացնում են անավարտ պաշարներ և հաշվառվում են փաստացի կապիտալացված ինքնարժեքից և զուտ իրացման արժեքից նվազագույնով: Երբ Հիմնադրամը ֆինանսական միջոցներ է ստանում կոնկրետ շինարարական նպատակների համար, այս գնահատման նպատակների համար իրացման զուտ արժեքը համարվում է համապատասխան պարտավորություն՝ ճանաչված հետաձգված հասույթում, քանի որ ակտիվը կհաշվանցվի պարտավորության դիմաց, ավարտից հետո:

5 Նոր կամ վերանայված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառումը

COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնություններ. ՖՀՄՍ 16-ի փոփոխություն (թողարկվել է 2020 թ. մայիսի 28-ին ուժի մեջ է մտնում 2020թ. հունիսի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությամբ վարձակալներին տրվում է հայեցողական հնարավորություն՝ որոշելու, թե արդյոք COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնությունները հանդիսանում են վարձակալության պայմանների փոփոխություն: Վարձակալները կարող են իրենց հայեցողությամբ վարձավճարների գծով արտոնությունների չափումը իրականացնել այնպես, ինչպես եթե դրանք չհանդիսանային վարձակալության պայմանների փոփոխություն: Գործնական նպատակահարմարությամբ պայմանավորված այս լուծումը վերաբերում է միայն այն վարձավճարների գծով արտոնություններին, որոնք ուղղակիորեն հանդիսանում են COVID-19 համավարակի հետևանք, և միայն այն դեպքում, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները. վարձավճարներում փոփոխությունները հանգեցնում են վարձակալության դիմաց հատուցման այնպիսի վերանայման, որ այն ըստ Էուլթյան հավասար լինի, կամ չզերազանցի վերանայումից անմիջապես առաջ վարձակալության դիմաց հատուցման գումարը. վարձավճարների ցանկացած նվազեցում ազդում է միայն 2021թ. հունիսի 30-ից ոչ ուշ վճարման ենթակա վճարումների վրա. և վարձակալության այլ պայմանների մեջ տեղի չեն ունենում Եական փոփոխություններ:

Ստորև թվարկված վերանայված ստանդարտներն ուժի մեջ են մտել՝ սկսած 2021թ. հունվարի 1-ից, սակայն դրանք Եական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի վրա.

Բազային տոկոսադրույքի (IBOR) բարեփոխում. ՖՀՄՍ 9-ի, ՀՀՄՍ 39-ի, ՖՀՄՍ 7-ի, ՖՀՄՍ 4-ի և ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ - Փուլ 2 (թողարկված են 2020թ. օգոստոսի 27-ին և ուժի մեջ են մտնում 2021թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փուլ 2-ի ուղղումներն ուղղված են բարեփոխումների ներդրման արդյունքում ի հայտ եկող հարցերի լուծմանը, ներառյալ այն հարցերի, որոնք վերաբերում են մեկ բազային տոկոսադրույքի փոխարինմանը այլընտրանքայինով: Փոփոխությունները վերաբերում են հետևյալ ոլորտներին.

- Բազային տոկոսադրույքի բարեփոխումից բխող դրամական միջոցների պայմանագրային հոսքերի որոշման հիմքում ընկած փոփոխությունների մշակում. («IBOR բարեփոխում»): Ամորտիզացված արժեքով չափման ենթակա գործիքների համար, փոփոխություններով նախատեսված է, որ գործնական նպատակահարմարությունից ելնելով, կազմակերպությունները IBOR-ի բարեփոխման արդյունքում պայմանագրային դրամական հոսքերի որոշման հիմքի փոփոխությունը պետք է հաշվարկեն արդյունավետ տոկոսադրույքի արդիականացման միջոցով, օգտագործելով ՖՀՄՍ 9-ի B5.4.5 պարբերության ուղեցույցը: Հետևաբար, այդ ժամանակ շահույթ կամ վնաս չի ճանաչվել: Այս գործնական նպատակահարմարությունը կիրառելի է միայն այդպիսի փոփոխության նկատմամբ և այնքանով, որքանով այն անհրաժեշտ է որպես IBOR բարեփոխման ուղղակի հետևանք, և նոր հիմքը տնտեսապես համարժեք է նախորդ հիմքին: ՖՀՄՍ 9-ի ներդրման ժամանակավոր արտոնությունից օգտվող ապահովագրողները նույնպես պետք է առաջնորդվեն նույն գործնական նպատակահարմարությամբ: Նաև փոփոխվել է ՖՀՄՍ 16-ը, ըստ որի վարձակալներից պահանջվում է նույն գործնական նպատակահարմարությամբ առաջնորդվել վարձակալության պայմանագի այն փոփոխությունները հաշվառելիս, որոնք IBOR բարեփոխման արդյունքում հանգեցնում են ապագա վարձակալական վճարների որոշման հիմքի փոփոխության:

5 Նոր կամ վերանայված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառումը (շարունակություն)

- *Հեջավորման հարաբերություններում պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչների 1-ին փուլի գծով փոփոխությունների համար սահմանված արտոնությունների ավարտի ամսաթիվը*. փուլ 2-ի փոփոխությունների համաձայն կազմակերպություններից պահանջվում է հեռանկարում դադարեցնել 1-ին փուլի արտոնությունները պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչների նկատմամբ նշված երկու ամսաթվերից առավել վաղ ամսաթվի դրությամբ. պայմանագրով չսահմանված ռիսկի բաղադրիչում փոփոխության կատարման ամսաթիվ, կամ հեջավորման հարաբերությունների դադարեցման ամսաթիվ: 1-ին փուլի փոփոխությունները չեն սահմանում ռիսկի բաղադրիչների ավարտի ամսաթիվը:
- *Հեջավորման հաշվառմանը ներկայացվող հատուկ պահանջների կիրառումից լրացուցիչ ժամանակավոր բացառություններ*. 2-րդ փուլի փոփոխությունները նախատեսում են հեջավորման հաշվառման՝ ՀՀՄՍ 39 և ՀՀՄՍ 9-ով սահմանված հատուկ պահանջների կիրառման լրացուցիչ ժամանակավոր արտոնություններ հեջավորման հարաբերությունների նկատմամբ, որոնք անմիջական ազդեցություն են կրել IBOR բարեփոխման արդյունքում:
- *IBOR բարեփոխմանը վերաբերող լրացուցիչ բացահայտումներ համաձայն ՀՀՄՍ 7-ի*. Փոփոխությունները սահմանում են հետևյալ տեղեկատվության բացահայտման պահանջներ. (i) ինչպես է կազմակերպությունը կառավարում այլընտրանքային բազային տոկոսադրույքների անցումը. առաջընթացը և անցումից բխող ռիսկերը. (ii) քանակական տեղեկատվություն անցմանը նախապատրաստվող ածանցյալ և ոչ ածանցյալ ֆինանսական գործիքների վերաբերյալ՝ տարանջատված ըստ նշանակալից բազային տոկոսադրույքների. (iii) IBOR բարեփոխման արդյունքում ռիսկերի կառավարման ռազմավարության ցանկացած փոփոխության նկարագրություն:

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ

Հրապարակվել են 2022թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Հիմնադրամի կողմից:

«Ակտիվների վաճառք կամ հատկացում՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՀՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկված են 2014թ. սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍ-ի կողմից որոշվելիք ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՀՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը:

Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ ամբողջ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը:

ՀՀՄՍ 17 «Ապահովագրական պայմանագրեր» (թողարկված է 2017թ. մայիսի 18-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 17-ը փոխարինում է ՀՀՄՍ 4-ին, որը թույլ էր տալիս ընկերություններին կիրառել ապահովագրական պայմանագրերի համար գործող հաշվապահական հաշվառման գործելակերպը, ինչը դժվարացնում էր մնացած առումներով համանման ապահովագրական ընկերությունների ֆինանսական արդյունքների համեմատությունը և համադրությունը ներդրողների համար:

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

ՖՀՄՍ 17-ը մեկ միասնական սկզբունքի վրա հիմնված հաշվապահական ստանդարտ է՝ ապահովագրողի կողմից պահվող բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերի, այդ թվում վերաապահովագրության պայմանագրերի հաշվառումը իրականացնելու համար: Ստանդարտը պահանջում է, որ ապահովագրության պայմանագրերի խմբերը ճանաչվեն և չափվեն (i) ապագա դրամական միջոցների հոսքերի՝ ռիսկով ճշգրտված ներկա արժեքով (պայմանագրերի կատարման դրամական հոսքեր)՝ հաշվի առնելով պայմանագրերի կատարման դրամական հոսքերի վերաբերյալ առկա ողջ տեղեկատվությունը, որը համահունչ է դիտարկելի շուկայական տեղեկատվությանը, գումարած՝ (եթե արժեքը պարտավորություն է) կամ հանած՝ (եթե արժեքը ակտիվ է) (ii) պայմանագրերի խմբի չբաշխված շահույթի գումարը (պայմանագրերի ծառայության մարժա): Ապահովագրողները կարտացոլեն ապահովագրական պայմանագրերի մեկ խմբից ստացված շահույթը այն ժամանակահատվածում, որի ընթացքում դրանք ապահովվում են ծածկույթ և ազատվում են ռիսկից: Եթե պայմանագրերի խումբը հանդիսանում է կամ դառնում է ոչ շահութաբեր, կազմակերպությունը անմիջապես ճանաչում է վնաս:

ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 4-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հունիսի 25-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները ներառում են մի շարք պարզաբանումներ՝ ՖՀՄՍ 17-ի ներդրման գործընթացը դյուրինացնելու, ինչպես նաև ստանդարտի պահանջները և անցումային որոշակի դրույթները հստակեցնելու նպատակով: Այս փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 17 -ի ութ ոլորտներին և չեն փոխում ստանդարտի հիմնարար սկզբունքները: ՖՀՄՍ 17-ում տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները.

- **Ուժի մեջ մտնելու ամսաթիվ.** ՖՀՄՍ 17-ի (փոփոխություններով) ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է երկու տարով: Ստանդարտը պետք է կիրառվի 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 4-ով սահմանված՝ ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակավոր արտոնությունը նույնպես հետաձգվել է մինչև 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջաններ:
- **Ապահովագրության ձեռքբերման դրամական հոսքերի ակնկալվող փոխհատուցում.** կազմակերպություններից պահանջվում է իրենց ձեռքբերման ծախսերի մի մասը դասակարգել համապատասխան պայմանագրերին, որոնց համար ակնկալվում է երկարաձգում, և այդ ծախսերը ճանաչել որպես ակտիվներ, քանի դեռ կազմակերպությունը չի ճանաչել պայմանագրի երկարաձգման ժամկետը: Կազմակերպությունները պարտավոր են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատել ակտիվի վերականգնման հավանականությունը և կոնկրետ ակտիվների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնել ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:
- **Ներդրումային ծառայություններին վերագրվող պայմանագրային ծառայությունների մարժա.** Ծածկույթի տարրերը անհրաժեշտ է որոշել՝ հաշվի առնելով հատույցների ծավալը, ինչպես նաև ապահովագրական ծածկույթի և ներդրումային ծառայությունների ակնկալվող ժամկետը՝ փոփոխական վճարներ նախատեսող պայմանագրերի և այլ՝ ընդհանուր մոդելի ներքո ներդրումային եկամուտների ստացում նախատեսող ծառայությունների պայմանագրերի համար: Ներդրումային գործունեության գծով ծախսերը պետք է ներառվեն որպես դրամական միջոցների հոսքեր ապահովագրության պայմանագրի շրջանակներում, երբ կազմակերպությունը նման գործողությունները ձեռնարկում է ապահովագրողի համար ապահովագրության ծածկույթից ստացվող օգուտները մեծացնելու նպատակով:
- **Ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր. վնասների վերականգնում.** Երբ կազմակերպությունը վնաս է ճանաչում սկզբնական ճանաչման պահին հիմնական ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի գծով, կամ խմբում անբարենպաստ բազային ապահովագրության պայմանագրեր ներառելու արդյունքում, կազմակերպությունը պետք է ճշգրտի ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի պայմանագրային ծառայությունների գծով մարժան և ճանաչի այդ վերաապահովագրության պայմանագրերի գծով շահույթ: Վերաապահովագրության պայմանագրով վերականգնված վնասի չափը հաշվարկվում է՝ բազային ապահովագրության պայմանագրերով ճանաչված վնասը բազմապատկելով բազային ապահովագրության պայմանագրերի գծով պահանջների տոկոսին, որը կազմակերպությունն ակնկալում է վերականգնել ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրով: Այս պահանջը կկիրառվի միայն այն դեպքում, եթե ձեռք բերված վերաապահովագրության պայմանագիրը ճանաչվի նախքան բազային ապահովագրության պայմանագրերի գծով վնասի ճանաչումը, կամ վերջինիս հետ միաժամանակ:

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

- *Այլ փոփոխություններ.* Այլ փոփոխություններով նախատեսվում են գործողության շրջանակից բացառություններ վարկային քարտերի որոշ պայմանագրերի (կամ նմանատիպ պայմանագրերի) և որոշ վարկային պայմանագրերի համար: Սահմանվում է նաև ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ապահովագրության պայմանագրերով նախատեսված ակտիվների և պարտավորությունների ներկայացում պորտֆելներում՝ խմբերի փոխարեն: Նախատեսվում է ռիսկերի մեղմացման տարբերակի կիրառելիություն այն դեպքում, երբ ֆինանսական ռիսկերի մեղմացման նպատակով գործադրվում են ձեռք բերված վերաապահովագրության պայմանագրեր և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ: Նախատեսվում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն՝ ՖՀՄՍ 17-ի կիրառմամբ նախորդ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվապահական գնահատումներում փոփոխությունների համար: Նախատեսվում է կոնկրետ ապահովագրողին վերագրվող եկամտի վճարների և մուտքերի ներառում պայմանագրերի կատարման դրամական հոսքերում, ըստ ապահովագրության պայմանագրի: Սահմանվում են անցումային շրջանի ընթացքում պահանջներից ընտրողական բացառություններ և այլ ոչ էական փոփոխություններ:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը - ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020թ. հունվարի 23-ին և ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

Կիրառման սահմանափակ շրջանակ ունեցող այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Մարումը հետաձգելու իրավունքն առաջանում է միայն այն դեպքում, եթե կազմակերպությունը ժամանակաշրջանի վերջում բավարարում է բոլոր կիրառելի պայմանները:

Պարտավորությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմանվող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք:

Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը. ուժի մեջ մտնելու ամսաթվի հետաձգում. ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (թողարկված են 2020 թ. հունիսի 15-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները, որոնք վերաբերում են պարտավորությունների՝ որպես կարճաժամկետ և երկարաժամկետ դասակարգմանը, թողարկվել են 2020թ. հունվարին, և նախնական ուժի մեջ մտնելու ամսաթիվ է սահմանվել 2022թ. հունվարի 1-ը: Այնուամենայնիվ, COVID-19 համավարակով պայմանավորված, ուժի մեջ մտնելու ամսաթիվը հետաձգվել է մեկ տարով, որպեսզի կազմակերպությունները բավարար ժամանակ ունենան փոփոխությունների արդյունքում դասակարգումներում տեղի ունեցող փոփոխությունները ներդնելու համար:

«Նախքան ակտիվի նպատակային օգտագործումը ստացված հասույթ, անբարենպաստ պայմանագրեր. պայմանագրի կատարման արժեքը», «Հղում հայեցակարգային հիմունքներին». ՀՀՄՍ 16-ի, ՀՀՄՍ 37-ի և ՀՀՄՍ 3-ի փոփոխություններ՝ սահմանափակ կիրառության շրջանակով, և ՀՀՄՍ 1-ին, ՀՀՄՍ 9-ին, ՀՀՄՍ 16-ին և ՀՀՄՍ 41-ին վերաբերող 2018-2020 թթ. ՀՀՄՍ-ների տարեկան բարելավումներ (թողարկված են 2020թ. մայիսի 14-ին և ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

ՀՀՄՍ 16-ի փոփոխությամբ կազմակերպություններին արգելվում է հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքից նվազեցնել այն պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, որն արտադրվել է կազմակերպության կողմից ակտիվն իր նպատակային օգտագործման համար անհրաժեշտ վիճակի բերելու ընթացքում: Նման պատրաստի արտադրանքի վաճառքից ստացված հասույթը, դրա արտադրության ծախսերի հետ միասին, այժմ ենթակա է ճանաչման շահույթում կամ վնասում: Նման պատրաստի արտադրանքի սկզբնական արժեքի չափման համար կազմակերպությունը պետք է կիրառի ՀՀՄՍ 2-ը: Սկզբնական արժեքը չի ներառի նման կերպ փորձարկվող ակտիվի մաշվածությունը, քանի որ այն դեռ պատրաստ չէ իր նպատակային օգտագործման համար: ՀՀՄՍ 16-ի փոփոխությունը նաև հստակեցնում է, որ կազմակերպությունը «ստուգում է ակտիվի պատշաճ գործունակությունը»՝ ակտիվի տեխնիկական և ֆիզիկական բնութագրերը գնահատելու միջոցով: Այս չափման համար էական չեն այդպիսի ակտիվի ֆինանսական ցուցանիշները: Հետևաբար, ակտիվը կարող է շահագործվել ղեկավարության մտադրությունների համաձայն, և մաշվածությունը կարող է հաշվարկվել մինչև ղեկավարության կողմից ակնկալվող գործառնական շահագործման համար անհրաժեշտ վիճակի հասնելը:

ՀՀՄՍ 37-ի փոփոխությունը հստակեցնում է «պայմանագրի կատարման գծով ծախսեր» հասկացությունը: Փոփոխությամբ պարզաբանվում է, որ պայմանագրի կատարման գծով ուղղակի ծախսերը ներառում են այդ պայմանագրի կատարման հավելյալ ծախսերը, ինչպես նաև պայմանագրի կատարման հետ անմիջականորեն կապված այլ ծախսերի բաշխումը: Փոփոխությամբ նաև հստակեցվում է, որ նախքան անբարենպաստ պայմանագրի գծով առանձին պահուստի ձևավորումը, կազմակերպությունը ճանաչում է արժեզրկումից կորուստ պայմանագրի կատարման ընթացքում օգտագործված ակտիվների գծով, այլ ոչ թե պայմանագրի կատարման համար հատկացված ակտիվների գծով:

ՖՀՄՍ 3-ում կատարվել է լրացում՝ ներառելով հղում ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքներին, ինչը թույլ է տալիս սահմանել ակտիվի կամ պարտավորության հասկացությունը ձեռնարկատիրական գործունեության միավորման համատեքստում: Մինչ այս փոփոխության ընդունումը, ՖՀՄՍ 3-ը հղում էր կատարում 2001թ.-ի ֆինանսական հաշվետվությունների Հայեցակարգային հիմունքներին: Բացի այդ, ՖՀՄՍ 3-ում ավելացվել է նոր բացառություն պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար: Այս բացառությամբ նախատեսվում է, որ ՖՀՄՍ 3-ը կիրառող կազմակերպությունը, որոշակի տիպի պայմանական դեպքերի և պայմանագրային պարտավորությունների համար ֆինանսական հաշվետվությունների 2018թ. Հայեցակարգային հիմունքների փոխարեն պետք է հղում կատարի ՀՀՄՍ 37-ին կամ ՖՀՄՄԻ (IFRIC) 21-ին: Առանց այս նոր բացառության, կազմակերպությունը ստիպված կլիներ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքում ճանաչել որոշ պարտավորություններ, որոնք չէր ճանաչի համաձայն ՀՀՄՍ 37-ի: Հետևաբար, ձեռքբերումից անմիջապես հետո կազմակերպությունը ստիպված կլիներ ապաճանաչել այդպիսի պարտավորությունները և ճանաչել տնտեսական օգուտներ չմարմավորող եկամուտ: Նաև պարզաբանվել է, որ ձեռք բերող կազմակերպությունը պարտավոր չէ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ճանաչել պայմանական ակտիվներ, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 37-ում:

ՖՀՄՍ 9-ի փոփոխությունն անդրադառնում է այն հարցերին, թե որ տեսակի վճարումներն են ենթակա ներառման «10% փորձարկման» կազմում ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման նպատակով: Ծախսերը կամ վճարումները կարող են կատարված լինել հօգուտ երրորդ անձանց կամ վարկատուի: Այս փոփոխության համաձայն, երրորդ անձանց օգտին կատարված ծախսերը կամ վճարումները չեն ներառվի «10% փորձարկման» կազմում:

Փոփոխություններ են կատարվել ՖՀՄՍ 16-ի 13-րդ նկարագրական օրինակում. հանվել է վարձատուի կողմից վարձակալվող գույքի բարելավումներին վերագրվող վճարումների օրինակը: Այս փոփոխությունը կատարվել է՝ վարձակալվող գույքի բարելավումների հաշվարկման հնարավոր անորոշությունից խուսափելու համար: ՖՀՄՍ 1-ը թույլ է տալիս օգտվել բացառությունից այն դեպքում, եթե դուստր ձեռնարկությունը սկսում է ՖՀՄՍ-ի կիրառումն ավելի ուշ ամսաթվով, քան իր մայր կազմակերպությունը: Դուստր ձեռնարկությունը կարող է չափել իր ակտիվներն ու պարտավորությունները այն հաշվեկշռային արժեքով, որով դրանք պետք է ներառվեին մայր կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցնելու ամսաթվից, եթե տեղի ունեցած չլինեին ճշգրտումներ համախմբման և ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքների արտացոլման նպատակներով, որի ներքո մայր կազմակերպությունը ձեռք է բերել նշված դուստր ձեռնարկությունը:

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

ՖՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, որը հնարավորություն է տալիս սույն ՖՀՄՍ 1-ի բացառությունը կիրառած կազմակերպություններին նաև արտարժույթի փոխարկումից կուտակային տարբերությունները չափելիս օգտագործել մայր կազմակերպության կողմից ներկայացված թվային մեծությունները՝ ելնելով մայր կազմակերպության ՖՀՄՍ-ի անցման ամսաթվից: ՖՀՄՍ 1-ի այս փոփոխությամբ վերոնշյալ բացառությունը տարածվում է արտարժույթի փոխարկումից առաջացած կուտակային տարբերությունների վրա, և նպատակ ունի նվազեցնել ՖՀՄՍ-ն առաջին անգամ կիրառող կազմակերպության ծախսերը: Այս փոփոխությունը կկիրառվի նաև դուևոր և համատեղ ձեռնարկությունների վրա, որոնք կօգտվեն ՖՀՄՍ 1-ով սահմանված նույն բացառությունից:

Վերացվել է պահանջը, ըստ որի կազմակերպությունները ՀՀՄՍ 41-ի համաձայն իրական արժեքը չափելիս պարտավոր էին հարկային հաշվառման տեսանկյունից հաշվի չառնել դրամական հոսքերը: Այս փոփոխության նպատակն է՝ ապահովել համապատասխանություն հարկումից հետո գեղչված դրամական հոսքերի ստանդարտի պահանջին:

Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով տեղեկատվության բացահայտում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 1-ում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնցով կազմակերպություններից պահանջվում է բացահայտել իրենց հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոխարեն:

Փոփոխությունները պարունակում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվության սահմանումները: Բացի այդ, փոփոխությունները պարզաբանում են, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը հավանական է, որ կհամարվի էական այն դեպքում, եթե առանց այդ տեղեկատվության, ֆինանսական հաշվետվությունների օգտագործողները չեն կարողանա ըմբռնել ֆինանսական հաշվետվություններում առկա այլ էական տեղեկատվությունը: Փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության օրինակներ, որոնք, հավանաբար, կարող են էական համարվել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների գծով: Բացի այդ, ՀՀՄՍ 1-ի փոփոխությամբ պարզաբանվում է, որ ոչ էական հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտման անհրաժեշտություն չկա: Այնուամենայնիվ, այդպիսի տեղեկատվության բացահայտման դեպքում, այն չպետք է դժվարեցնի հաշվապահական հաշվառման քաղաքականության էական տեղեկատվության ընկալումը: Այս փոփոխության օժանդակելու համար փոփոխություններ են կատարվել նաև ՖՀՄՍ-ի գործնական ուղեցույց 2-ում՝ «Էականության վերաբերյալ դատողություններ», որը ուղեցույց է տրամադրում հաշվապահական հաշվառման քաղաքականության գծով բացահայտումների նկատմամբ էականության հայեցակարգի կիրառման վերաբերյալ:

Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. Հաշվապահական հաշվառման գնահատումների որոշում (թողարկվել է 2021թ. փետրվարի 12-ին և ուժի մեջ է 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 8-ի փոփոխությունը պարզաբանում է, թե ինչպես պետք է կազմակերպությունները տարբերակեն հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունները:

COVID 19-ով պայմանավորված վարձավճարների գծով արտոնություններ. ՖՀՄՍ 16-ի փոփոխություն (թողարկվել է 2021թ. մարտի 31-ին և ուժի մեջ է 2021թ. ապրիլի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2020թ. մայիսին կատարվեց ՖՀՄՍ 16-ի փոփոխությունը, որը վարձակալներին տրամադրում էր հայեցողական հնարավորություն՝ գնահատելու, թե արդյոք COVID-19-ի հետ կապված վարձավճարների գծով արտոնությունները, որոնք 2021թ. հունիսի 30-ի դրությամբ կամ մինչ այդ ամսաթիվը հանգեցնում են վարձակալության վճարների նվազեցման, հանդիսանում են վարձակալության պայմանների փոփոխություն: 2021թ. մարտի 31-ի փոփոխությամբ, այդ արտոնությունը երկարաձգվել է 2021թ. հունիսի 30-ից մինչև 2022թ. հունիսի 30-ը:

Միևնույն գործարքից առաջացած ակտիվների և պարտավորությունների գծով հետաձգված հարկ – Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում (թողարկվել է 2021թ. մայիսի 7-ին, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները պարզաբանում են հետաձգված հարկի հաշվառման կարգը այնպիսի գործարքների համար, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվը շահագործումից հանելու դեպքում պարտավորությունների հաշվեգրումը:

6 Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ (շարունակություն)

Որոշակի հանգամանքներում կազմակերպություններն ազատվում են ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչման դեպքում հետաձգված հարկի ճանաչումից: Նախկինում կար այս բացառության կիրառման անորոշություն որոշակի գործարքների նկատմամբ, ինչպիսիք են վարձակալությունը և ակտիվների շահագործումից հանելը, որոնց համար ճանաչվում էր ինչպես ակտիվ, այնպես էլ պարտավորություն: Փոփոխությունները պարզաբանում են, որ այս բացառությունը չի կիրառվում, և որ կազմակերպություններից պահանջվում է նման գործարքների գծով ճանաչել հետաձգված հարկ: Համաձայն այս փոփոխությունների, կազմակերպությունները պարտավոր են հետաձգված հարկ ճանաչել այն գործարքների համար, որոնց գծով սկզբնական ճանաչման ժամանակ առաջանում են հավասար մեծությամբ հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ:

ՖՀՄՍ 17-ը կիրառող ապահովագրողների համար անցումային պահանջների կիրառման ընտրության հնարավորություն. Փոփոխություններ ՖՀՄՍ 17-ում (թողարկվել է 2021թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): ՖՀՄՍ 17-ի անցումային պահանջների փոփոխությունը ապահովագրողներին հնարավորություն է տալիս բարելավելու ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման վերաբերյալ տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Փոփոխությունը վերաբերում է միայն ապահովագրողների կողմից ՖՀՄՍ 17-ին անցմանը և չի ազդում ՖՀՄՍ17 -ի որևէ այլ պահանջի վրա: ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի անցումային պահանջները կիրառվում են տարբեր ամսաթվերով, և կհանձնեցնեն դասակարգման հետևյալ միանգամյա տարբերություններին ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ժամանակ ներկայացված համեմատական տեղեկատվության մեջ. հաշվապահական հաշվառման անհամապատասխանություններ ապահովագրական պայմանագրի գծով ընթացիկ արժեքով չափվող պարտավորությունների և ամորտիզացված արժեքով չափվող որևէ հարակից ֆինանսական ակտիվների միջև, և եթե կազմակերպությունը որոշում է վերաներկայացնել ՖՀՄՍ 9-ի նպատակներով համեմատական տեղեկատվությունը, ապա՝ դասակարգման տարբերություններ համեմատական ժամանակաշրջանում ապաճանաչված ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՀՄՍ 9-ը չի կիրառվում) և այլ ֆինանսական ակտիվների (որոնց նկատմամբ ՖՀՄՍ 9-ը կիրառվում է) միջև: Փոփոխությունը կօգնի ապահովագրողներին խուսափել այդ ժամանակավոր հաշվապահական անհամապատասխանություններից և, հետևաբար, կբարելավի համեմատական տեղեկատվության օգտակարությունը ներդրողների համար: Դա տեղի է ունենում ապահովագրողներին ֆինանսական ակտիվների վերաբերյալ համեմատական տեղեկատվության ներկայացման տարբերակների հնարավորություն տրամադրելու միջոցով: ՖՀՄՍ 17-ի սկզբնական կիրառման ժամանակ կազմակերպություններին, համեմատական տեղեկատվության ներկայացման առումով թույլատրվում է կիրառել դասակարգման ծածկույթ այն ֆինանսական ակտիվի նկատմամբ, որի համար կազմակերպությունը չի վերաներկայացնում ՖՀՄՍ 9-ի նպատակով համեմատական տեղեկատվությունը: Անցումային տարբերակը հասանելի կլինի գործիք առ գործիք՝ թույլ տալով կազմակերպությանը ներկայացնել համեմատական տեղեկատվությունն այնպես, ինչպես եթե ՖՀՄՍ 9-ի դասակարգման և չափման պահանջները կիրառվեին այդ ֆինանսական ակտիվի նկատմամբ, բայց չպահանջելով, որ կազմակերպությունը կիրառի ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները. և ֆինանսական ակտիվի նկատմամբ դասակարգման ծածկույթը կիրառող կազմակերպությունից կպահանջվի օգտագործել անցումային ամսաթվի դրությամբ հասանելի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվությունը՝ որոշելու, թե ինչպես է կազմակերպությունն ակնկալում դասակարգել այդ ֆինանսական ակտիվը ՖՀՄՍ 9 կիրառմամբ:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2021

7 Միջոցների օգտագործումից եկամուտ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2021թ.	2020թ.
Դրամային նվիրատվություններ	78,267	63,086
Իրականացված ծրագրերի արժեքը	12,950	78,654
Բնահրային նվիրատվություններ	1,357	1,168
Ընդամենը միջոցների իրացումից եկամուտ	92,574	142,908

Ծրագրային ծախսերը ներկայացված են համաձայն նույն տարրերի, ինչպես նշված է վերևի աղյուսակում:

8 Վարչական ծախսեր

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2021թ.	2020թ.
Մաշվածություն	15,563	15,724
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	10,001	11,104
Մասնագիտական ծառայություններ	2,340	7,021
Հաղորդակցության և տեղեկատվության ծառայություններ	482	678
Այլ ծախսեր	3,946	4,784
Ընդամենը վարչական ծախսեր	32,332	39,311

9 Շահութահարկ

Հիմնադրամը գնահատում և հաշվառում է իր ընթացիկ վճարվելիք շահութահարկը և իր ակտիվների և պարտավորությունների հարկային բազան՝ համաձայն ՀՀ հարկային օրենսդրության, որը կարող է տարբերվել ՖՀՄՍ-ից:

Հիմնադրամն ունի որոշակի մշտական հարկային տարբերություններ, որոնք առաջանում են շահութահարկի նպատակներով չնվազեցվող որոշակի ծախսերից և շահութահարկի նպատակներով չհարկվող որոշակի եկամուտներից: Համաձայն գործող օրենսդրության, ոչ առևտրային կազմակերպությունների՝ նվիրատվություններից ստացված եկամուտները և դրանց հաշվին կատարված ծախսերը չեն համարվում, համապատասխանաբար, հարկվող եկամուտներ և նվազեցվող ծախսեր շահութահարկի նպատակներով:

Ստորև բերված հաշվարկներում օգտագործվում է ներկայիս հարկի դրույքաչափը՝ 18%, որը ՀՀ-ում վճարվում են ձեռնարկությունների կողմից՝ վերջիններիս հարկվող շահույթից (ինչպես սահմանված է) ՀՀ հարկային օրենսդրության համապատասխան:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2021թ.	2020թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	5,857	4,359
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	5,857	4,359

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2021

9 Շահութահարկ (շարունակություն)

Տարվա շահութահարկի գծով ծախսը հաշվապահական շահույթի հաշվարկում արտացոլվում է հետևյալ կերպ՝

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2021թ.	2020թ.
Վնաս մինչև հարկումը	(103,872)	(73,278)
Շահութահարկի համար հաշվարկված ծախս 18% դրույքաչափով (2020թ.՝ 18%)	(18,697)	(13,190)
Հարկվող շահույթի որոշման ժամանակ չևճագեցվող ծախսերի ազդեցությունը	24,554	17,549
Տարվա շահութահարկի գծով ծախս	5,857	4,359

Հիմնադրամի եկամուտները և ծախսերը համարվում են չհարկվող և չևճագեցվող, բացառությամբ այն ծախսերի և եկամուտների որոնք վերաբերվում են Հիմնադրամի գործունեության ոչ հիմնական տեսակներին: Շահութահարկը տարվա ընթացքում առաջանում է հիմնականում տարվա ֆինանսական եկամտից:

10 Հիմնական միջոցներ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Փոխադրա- միջոցներ	Գրասենյակային սարքավորումներ	Ընդամենը
Սկզբնական արժեքն առ 1 հունվարի 2020թ.	48,130	50,218	98,348
Կուտակված մաշվածություն առ 1 հունվարի 2020թ.	(11,365)	(15,049)	(26,414)
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2020թ.	36,765	35,169	71,934
Ավելացումներ Մաշվածության ծախս	5,149 (6,292)	10,768 (12,224)	15,917 (18,516)
Հաշվեկշռային արժեքն 31 դեկտեմբերի 2020թ.	35,622	33,713	69,335
Սկզբնական արժեքն առ 1 հունվարի 2020թ.	53,279	60,986	114,265
Կուտակված մաշվածություն առ 1 հունվարի 2020թ.	(17,657)	(27,273)	(44,930)
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2021թ.	35,622	33,713	69,335
Ավելացումներ Օտարումներ Մաշվածության ծախս	- (14,201) (6,583)	3,728 - (11,031)	3,728 (14,201) (17,614)
Հաշվեկշռային արժեքն 31 դեկտեմբերի 2021թ.	14,838	26,410	41,248
Սկզբնական արժեքն առ 31 դեկտեմբերի 2021թ. Կուտակված մաշվածություն առ 31 դեկտեմբերի 2021թ.	33,430 (18,592)	64,714 (38,304)	98,144 (56,896)
Հաշվեկշռային արժեքն 31 դեկտեմբերի 2021թ.	14,838	26,410	41,248

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2021

11 Կապիտալացված շինարարական աշխատանքներ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2021թ.	2020թ.
Մանկական կենտրոն Սբ. Սարգիս եկեղեցու տարածքում		
Առ 1 հունվարի	779,319	779,319
Առ 31 դեկտեմբերի	779,319	779,319
Հասարակական կենտրոն Սբ. Հովհաննես եկեղեցու տարածքում		
Առ 1 հունվարի	-	37,940
Արժեզրկում մինչև զուտ իրացվելի արժեքը	-	(37,940)
Առ 31 դեկտեմբերի	-	-
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այգին		
Առ 1 հունվարի	5,000	5,000
	5,000	5,000
Առ 31 դեկտեմբերի	784,319	784,319

Մանկական կենտրոն Սբ. Սարգիս եկեղեցու տարածքում: Կապիտալացված շինարարական աշխատանքները ներկայացնում են Հիմնադրամի կողմից Երևան քաղաքի Սբ. Սարգիս եկեղեցու տարածքում մանկական կենտրոնի կառուցապատման ծախսերը: Կենտրոնը օգտագործվում է հաշմանդամ երեխաներին և կարիքավոր ընտանիքներին ուղղված ծրագրերի աշխատանքների և ծրագրերի համար: Կենտրոնի տարբեր ծրագրերն ու գործողությունները անցկացվում են գործընկեր կազմակերպությունների հետ: Մատչելիության միջազգային չափանիշներին համապատասխանող կենտրոնում հաշմանդամություն ունեցող երեխաները սովորում են ինքնուրույն կյանքի հմտություններ: Իրականացվում են մի շարք վերականգնողական և կրթական ծրագրեր, ինչպես նաև ճանաչողական և ֆիզիկական բուժական կուրսեր:

Մանկական կենտրոնի նախագծումը և կառուցումը սկսվել է 2013թ.-ին, հիմնականում ավարտվել՝ 2017թ.: Մանկական կենտրոնի ավարտի վերջնական ակտի ստացումից և կենտրոնի համապատասխան պետական մարմիններում գրանցումն ավարտելուց հետո շենքը կփոխանցվի հողամասի սեփականատեր՝ Մայր Աթոռին՝ համաձայն Հիմնադրամի և Մայր Աթոռի միջև 2012թ. դեկտեմբերի 27-ին ստորագրված համաձայնագրի: 31 դեկտեմբերի 2021թ.-ի և 2020թ.-ի դրությամբ Հիմնադրամը և Մայր Աթոռը Երևանի քաղաքապետարանի հետ քննարկում են հողամասի սահմանների փոփոխության հարցը՝ պայմանավորված կառուցված շենքի և հողամասի անհամապատասխանությամբ: 2021թ. հողամասի սեփականատերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, խնդրի լուծման համար դիմել է Երևանի քաղաքապետարանին, ինքնակամ շինությունը օրինականացնելու և նշված հողատարածքը սեփականության իրավունքով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնելու խնդրանքով: 2022թ.-ի փետրվարին հերթական նամակն է ուղղվել Երևանի քաղաքապետարանին Մայր Աթոռի կողմից, վերը նշված խնդիրը լուծելու խնդրանքով: Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ գործընթացը դեռ ընթացքի մեջ էր:

Հիմնադրամի ղեկավար անձնակազմը ցածր է գնահատում իրավական, գույքային կորուստների և այլ ռիսկերը, քանի որ շինարարությունն ավարտվել է մինչև 2022 թվականը, և քաղաքապետարանը կարող է ընդունել որոշում հողատարածքի սահմանների փոփոխությունը և կառույցը օրինականացնելու վերաբերյալ:

Հանրային կենտրոն՝ Սբ. Հովհաննես եկեղեցու տարածքում. Հիմնադրամը Սուրբ Հովհաննես եկեղեցու տարածքում ավարտել է երկրորդ կենտրոնի ճարտարապետական (տեխնիկական) նախագծման և հաշվառման աշխատանքները: Հիմնադրամը 2018 թվականին դադարեցրել է կենտրոնի շինարարական աշխատանքների մեկնարկը ի պատասխան շրջակա համայնքների անտուն բնակիչների խնդրանքների, մինչև իրենց հատկացված բնակարանների շինարարական աշխատանքների ավարտը: Հիմնադրամը պլանավորում է անդրադառնալ Սբ. Հովհաննես եկեղեցու տարածքում հանրային կենտրոնի կառուցման հարցին անապաստան անձանց բնակարանների պատրաստ լինելուց հետո: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շինարարության ծախսերի փոխհատուցման հայտանիշների բացակայության և Հիմնադրամի սեփական միջոցներով շինարարության կատարման պատճառով շինարարության արժեքը արժեզրկվել է մինչև իրացման զուտ արժեք, որը 2020թ. կազմել է զրո: 2021թ.-ի ընթացքում որևէ փոփոխություն տեղի չի ունեցել:

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2021

11 Կապիտալացված շինարարական աշխատանքներ (շարունակություն)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այգին. Հիմնադրամը սկսել և ավարտել է ճարտարապետական և դիզայնի աշխատանքները Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տարածքի այգում, սակայն վերակառուցման և բարեկարգման աշխատանքները դեռևս չեն սկսվել:

12 Բանկերում պահվող ժամկետային ավանդներ

Առ 31 դեկտեմբերի 2021թ. և 2020թ. Հիմնադրամն ուներ ավանդ մեկ տեղական բանկում ԱՄՆ դոլարով, ավանդի տոկոսայնությունը 4.5% է (2020թ.՝ 4.5%):

Տարվա ընթացքում ավանդների գծով ստացված տոկոսային եկամուտը կազմել է 15,451 հազ. ՀՀ դրամ, որը ներառվել է ֆինանսական եկամուտ տողում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում (2020թ.՝ 23,916 հազ. ՀՀ դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ավանդները ներառում են 7,833 հազ. ՀՀ դրամի չափով հաշվեգրված տոկոս (առ 31 դեկտեմբերի 2020թ.՝ 16,561 հազ. ՀՀ դրամ): Ավանդներից ոչ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

Ավանդի մարման ժամկետն է 2023թ. հունիսը (2020թ.՝ 2021թ. հունիսը), սակայն հասանելի է օգտագործման համար:

Արժեզրկման կորուստների գծով պահուստը ճանաչվել է ըստ ՖՀՄՍ 9 ընդունման պահանջների և ներկայացնում է փուլ 1-ում գտնվող ակտիվների գծով պահուստ: Արժեզրկման կորուստների գծով պահուստի համադրումն ըստ փուլերի ՖՀՄՍ 9-ի համաձայն հետևյալն է՝

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Ժամկետային ավանդների գծով ակնկալվող պարտքային կորուստ
	Փուլ 1
Արժեզրկման կորուստների գծով պահուստ առ 1 հունվարի, 2020թ.	5,339
Արժեզրկման կորուստների գծով պահուստի վերականգնում տարվա ընթացքում	-
Արժեզրկման կորուստների գծով պահուստ առ 31 դեկտեմբերի, 2020թ.	5,339
Արժեզրկման կորուստների գծով պահուստի վերականգնում տարվա ընթացքում	-
Արժեզրկման կորուստների գծով պահուստ առ 31 դեկտեմբերի, 2021թ.	5,339

Ստորև աղյուսակը բացահայտում է բանկերում պահվող ժամկետային ավանդների վարկային որակը՝ հիմնված վարկային ռիսկի վարկանշման վրա առ 31 դեկտեմբերի 2021թ. և 31 դեկտեմբերի 2020թ.:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2021թ.	2020թ.
B1 (Moody's)	296,340	473,192
Ընդամենը բանկերում պահվող ժամկետային ավանդներ	296,340	473,192

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2021

13 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Կանխիկ միջոցներ	2	2
Ցպահանջ վճարման ենթակա բանկային մնացորդներ	35,419	27,083
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,421	27,085

Ստորև աղյուսակը բացահայտում է ցպահանջ բանկային մնացորդների վարկային որակը՝ հիմնված վարկային ռիսկի վարկանշման վրա առ 31 դեկտեմբերի 2021թ. և 31 դեկտեմբերի 2020թ.՝

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2021թ.	2020թ.
B1 (Moody's)	12,911	99
Ba3 (Moody's)	22,508	26,984
Ընդամենը ցպահանջ բանկային մնացորդներ	35,419	27,083

Բոլոր դրամական միջոցները և դրանց համարժեքները դասակարգվում են ընթացիկ և ոչ արժեզրկված (առ 31 դեկտեմբերի 2020թ.՝ ընթացիկ և ոչ արժեզրկված): Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ԱՊԿ գծով պահուստը նշանակալի չի եղել, և հետևաբար՝ չի ձևավորվել:

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2021

14 Հետաձգված հասույթ

Ստացված նվիրատվությունները նախատեսվել են Հիմնադրամի գործունեության համար՝ ըստ վերջինիս նպատակների և ծրագրերի: Դոնորներից ստացված միջոցներն օգտագործվում են Հիմնադրամի մանդատին համապատասխանող, Հոգաբարձուների կողմից տարեկան ծրագրում և բյուջեում հաստատված ծրագրերի աջակցության համար:

Հիմնադրամը նվիրատվություններ է ստանում իր հիմնադիրներից և այլ աղբյուրներից: Հաշվետու ժամանակաշրջանում ստացված և օգտագործված նվիրատվությունները նկարագրված են ստորև ներկայացված աղյուսակում: Միջոցների օգտագործումն իրենից ներկայացնում է ծրագրային ուղիղ ծախսերի նպատակով ծախսված նվիրատվությունների միջոցները, անձնակազմի ծախսերը և վարչական ծախսերը:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	1 հունվարի 2020թ.	Շարժը ընթացքում	31 դեկտեմբերի 2020թ.	Շարժը 2021թ. ընթացքում	31 դեկտեմբերի 2021թ.
Ստացված նվիրատվություններ					
Դրամական	1,405,003	22,635	1,427,638	520	1,428,158
Բնաիրային	516,624	-	516,624	-	516,624
Ընդամենը նվիրատվություններ	1,921,627	22,635	1,944,262	520	1,944,782
Նվիրատվությունների օգտագործում					
Բնաիրային նվիրատվություն Դրամական	(517,622)	(1,168)	(518,790)	(1,357)	(520,147)
նվիրատվություն վաճակցություն գործունեությանը	(144,567)	(78,654)	(223,221)	(12,950)	(236,171)
Ծրագրային ծախսեր	(24,927)	-	(24,927)	-	(24,927)
Ծրագրային ծախսեր	(54,915)	(63,086)	(118,001)	(78,267)	(196,268)
Ընդամենը օգտագործում	(742,031)	(142,908)	(884,939)	(92,574)	(977,513)
Ստացված նվիրատվությունների մնացորդ՝ հանած օգտագործումը (հետաձգված եկամուտ)					
	1,179,596	(120,273)	1,059,323	(92,054)	967,269
Կապիտալ ծրագրեր	(822,259)	37,940	(784,319)	-	(784,319)
Չօգտագործված նվիրատվությունների մնացորդ					
	357,337	(82,333)	275,004	(92,054)	182,950

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2021

15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>		
Պարտավորություններ ծառայությունների և ապրանքների մատվ	1,140	875
Այլ հաշվեգրված պարտավորություններ	2,200	2,200
	3,340	3,075
<i>Ոչ ֆինանսական պարտավորություններ</i>		
Չօգտագործված արձակուրդի պահուստ	610	7,813
Պետական բյուջե վճարման ենթակա գումարներ	4,058	3,975
	4,668	11,788
Ընդամենը կրեդիտորական պարտքեր	8,008	14,863

16 Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը հանդիսանում է Հիմնադրամի գործունեության հիմնարար գործոն և կարևոր տարր: Հիմնադրամի գործունեությունը ենթակա է ֆինանսական գործիքների օգտագործումից հետևյալ հիմնական ռիսկերի՝

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Հիմնադրամի ենթարկվածության մասին, ռիսկերի գնահատման և կառավարման հետ կապված Հիմնադրամի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումները:

Ռիսկի կառավարման հիմունքներ: Հոգաբարձուների խորհուրդը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի ռիսկերի կառավարման քաղաքականության մշակման և վերահսկման համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Հոգաբարձուների խորհրդին կատարած աշխատանքի վերաբերյալ:

Հիմնադրամի ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Հիմնադրամը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունն ու ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Հիմնադրամի գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Հիմնադրամը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն իրենց դերերը և պարտականությունները: Հիմնադրամը կառավարում է իր ծախսումները և գույք ակտիվները՝ իր գործունեության շարունակականության կարողությունն ապահովելու և միևնույն ժամանակ՝ իրագործելով իր նպատակները ծախսերի օպտիմալացման միջոցով: Հիմնադրամի կողմից իր ռիսկերի չափման եղանակներում փոփոխություններ տեղի չեն ունեցել, ինչպես նաև չեն փոփոխվել ռիսկերի ենթարկվածությունը կամ դրանց կառավարման և չափման մեթոդները:

(ա) Պարտքային ռիսկ. Հիմնադրամը ենթակա է պարտքային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ֆինանսական վնաս կրելու ռիսկ այն դեպքում, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտավորությունները: Հիմնադրամին հիմնականում բնորոշ է պարտքային ռիսկը հաշվետու ամսաթվի դրությամբ բանկային հաշիվների մնացորդներում առկա դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով:

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2021

16 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ենթարկվածությունը պարտքային ռիսկին: Ռիսկի առավելագույն չափն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը: Պարտքային ռիսկի առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ հետևյալն է՝

	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	35,421	27,085
Բանկերում պահվող ժամկետային ավանդներ	296,340	473,192
Ընդամենը	331,761	500,277

(բ) Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Հիմնադրամը կունենա իր ֆինանսական պարտավորությունների կատարման դժվարություններ՝ դրանց ժամկետը լրանալիս: Հիմնադրամը սահմանափակում է իրացվելիության ռիսկը, քանի որ գործառնություններն իրականացվում են բյուջեի համաձայն: Հիմնադրամի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է՝ մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե՛ սովորական, թե՛ արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Հիմնադրամի համբավը վտանգի ենթարկելու:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների իրացվելիության վերլուծությունը առ 31 դեկտեմբերի 2021թ. և 2020թ.: Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են չզեղչված դրամական հոսքեր՝ ելնելով դրանց պայմանագրով սահմանված ժամկետների գծով պահանջի առաջադրման ամենավաղ ամսաթվից: Չի ակնկալվում, որ այս աղյուսակներում ներկայացված դրամական հոսքերը կարող են տեղի ունենալ էապես ավելի վաղ, կամ էապես տարբեր գումարներով:

	31 դեկտեմբերի 2021թ.		
	Մինչև 6 ամիս	Ընդամենը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Ապրանքների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	1,140	1,140	1,140
Այլ հաշվեգրված պարտավորություններ	2,200	2,200	2,200
	3,340	3,340	3,340

	31 դեկտեմբերի 2020թ.		
	Մինչև 6 ամիս	Ընդամենը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր	Հաշվեկշռային արժեք
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Ապրանքների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	875	875	875
Այլ հաշվեգրված պարտավորություններ	2,200	2,200	2,200
Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք գումարներ	4,800	4,800	4,800
	7,875	7,875	7,875

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՍ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2021

16 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը ըստ նրանց հաշվեկշռային արժեքների և պայմանագրով սահմանված ժամկետայնության:

	31 դեկտեմբերի 2021թ.		
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-6 ամիս	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ			
Կանխիկ միջոցներ և բանկային մնացորդներ	35,421	-	35,421
Բանկերում պահվող ժամկետային ավանդներ	-	296,340	296,340
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	35,421	296,340	331,761
Ֆինանսական պարտավորություններ			
Ապրանքների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ Այլ հաշվեգրված պարտավորություններ	1,140	-	1,140
Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք գումարներ	2,200	-	2,200
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	3,340	-	3,340
Չուտ դիրք	32,081	296,340	328,421

	31 դեկտեմբերի 2020թ.		
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-6 ամիս	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ			
Կանխիկ միջոցներ և բանկային մնացորդներ	27,085	-	27,085
Բանկերում պահվող ժամկետային ավանդներ	-	473,192	473,192
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	27,085	473,192	500,277
Ֆինանսական պարտավորություններ			
Ապրանքների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ Այլ հաշվեգրված պարտավորություններ	875	-	875
Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք գումարներ	2,200	-	2,200
Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք գումարներ	-	4,800	4,800
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	3,075	4,800	7,875
Չուտ դիրք	24,010	468,392	492,202

(գ) Շուկայական ռիսկ. շուկայական ռիսկը Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքների և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(դ) Արժույթային ռիսկ. արժույթային ռիսկը սահմանվում է որպես ֆինանսական գործիքի արժեքի տատանման ռիսկ՝ արտարժույթային փոխարժեքների փոփոխությունների արդյունքում: Հիմնադրամի գործունեությունը ծավալվում է հիմնականում Հայաստանում և, որպես այդպիսին, Հիմնադրամի գործառնությունների զգալի մասը տեղի է ունենում տեղական արժույթով՝ ՀՀ դրամով:

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ԶԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2021

16 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հիմնադրամի ֆինանսական վիճակը և դրամական հոսքերը ենթակա են արտարժույթի գործող փոխարժեքի տատանումների ազդեցության ռիսկին:

Հիմնադրամի ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին առ 31 դեկտեմբերի 2021թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	13,063	22,358	35,421
Բանկերում պահվող ժամկետային ավանդներ	-	296,340	296,340
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	13,063	318,698	331,761
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Այլաբանների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	1,140	-	1,140
Այլ հաշվեգրված պարտավորություններ	2,200	-	2,200
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	3,340	-	3,340
Բաց դիրք	9,723	318,698	328,421

Հիմնադրամի ենթարկվածությունը արտարժույթային ռիսկին առ 31 դեկտեմբերի 2020թ. ներկայացված է ստորև բերված աղյուսակում՝

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Ընդամենը
Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,935	24,150	27,085
Բանկերում պահվող ժամկետային ավանդներ	-	473,192	473,192
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ	2,935	497,342	500,277
Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ			
Այլաբանների և ծառայությունների գծով վճարվելիք գումարներ	875	-	875
Այլ հաշվեգրված պարտավորություններ	2,200	-	2,200
Կարճաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք գումարներ	4,800	-	4,800
Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	7,875	-	7,875
Բաց դիրք	(4,940)	497,342	492,402

Արտարժույթային ռիսկի զգայունություն: Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է Հիմնադրամի զգայունությունը ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% աճի կամ նվազման հանդեպ: Տվյալ 10%-ն իրենից ներկայացնում է այն զգայունության տոկոսը, որն օգտագործվում է արտարժույթային ռիսկը հիմնական ղեկավար անձնակազմին ներկայացնելիս և իրենից ներկայացնում է արտարժույթի փոխարժեքի ողջամտորեն հնարավոր փոփոխությունն ըստ ղեկավարության գնահատականի: Չզգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով գնանշված դրամային հոդվածները և ճշգրտում է դրանց փոխարկումը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ արտարժույթի փոխարժեքների 10% տարբերության տեսանկյունից: Ստորև նշված դրական թիվը ներկայացնում է շահույթի և վնասի կամ զուտ ակտիվների աճ ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 10% արժեզրկման դեպքում:

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2021

16 Ռիսկերի կառավարում (շարունակություն)

ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 10% արժևորումը համապատասխան ազդեցություն կունենար շահույթի և վնասի կամ զուտ ակտիվների վրա, և մնացորդը կլիներ բացասական:

	31 դեկտեմբերի 2021թ. Շահույթ կամ վնաս և այլ համապարփակ ֆին. արդյունք/ Զուտ ակտիվներ	31 դեկտեմբերի 2020թ. Շահույթ կամ վնաս և այլ համապարփակ ֆին. արդյունք/ Զուտ ակտիվներ
ՀՀ դրամի 10% արժևորում ԱՄՆ դոլարի նկատմամբ (2020թ.՝ 10%)	(31,870)	(49,734)
ՀՀ դրամի 10% արժեզրկում ԱՄՆ դոլարի նկատմամբ (2020թ.՝ 10%)	31,870	49,734

Վերևում բերված աղյուսակում ներկայացված է առանցքային ենթադրության փոփոխության ազդեցությունը այլ ենթադրությունների անփոփոխ պայմանների դեպքում: Իրականում ենթադրությունների, ինչպես նաև այլ գործոնների միջև գոյություն ունի փոխադարձ կապ: Հարկ է նաև նշել, որ այս զգայունությունները ոչ գծային են, և ավելի մեծ կամ փոքր ազդեցությունները չպետք է միջարկվեն (ինտերպոլյացիա) կամ արտարկվեն (էքստրապոլյացիա) այս արդյունքներից:

Տոկոսադրույքի ռիսկ. Հիմնադրամը չի ենթարկվում տոկոսադրույքի ռիսկի, քանի որ բանկերում ունի միայն ֆիքսված տոկոսադրույքով ժամկետային ավանդներ: Ղեկավարությունը չի սահմանել տոկոսադրույքի ռիսկի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն կառավարում է այս ռիսկը շուկայի տոկոսադրույքների և ֆինանսական հաստատությունների վարկանիշային գնահատումների կանոնավոր ստուգման միջոցով: Բանկում պահվող ժամկետային ավանդների տոկոսները ներկայացված են ծանոթագրություն 12-ում:

Ղեկավարությունը չի իրականացնում տոկոսադրույքի զգայնության պաշտոնական վերլուծություն, քանի որ Հիմնադրամը չի ունեցել լողացող տոկոսադրույքով ֆինանսական ակտիվներ կամ պարտավորություններ տարվա ընթացքում կամ հաշվետու ամսաթվի դրությամբ:

17 Ռիսկերի կառավարում

ՖՀՄՍ-ն սահմանում է իրական արժեքը որպես գին, որը կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի ընթացքում: Այստեղ ներկայացված գնահատումները կարող են բնութագրական չլինել Հիմնադրամի կողմից որոշակի գործիքի ամբողջական տնօրինումը շուկայում փոխարկման արդյունքում իրացնելիս Հիմնադրամի կողմից ստացվելիք գումարների առումով:

Այնուամենայնիվ, գնահատված իրական արժեքը որոշելու համար անհրաժեշտ է կիրառել դատողություն: Հայաստանի Հանրապետությունը շարունակում է կրել զարգացող շուկայի որոշ բնութագրեր և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկայում գործառնությունների ծավալները: Շուկայական գնանշումները կարող են արդիական չլինել կամ արտացոլել արտասովոր իրացման գործարքներ, հետևաբար՝ չներկայացնել ֆինանսական գործիքների իրական արժեքները: Ղեկավարությունը օգտագործել է շուկայում առկա ողջ հասանելի տեղեկատվությունը՝ ֆինանսական ակտիվների իրական արժեքները գնահատելու համար:

Իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի համեմատություն: Հաշվի առնելով մի շարք ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կարճաժամկետ բնույթը, ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են իրենց իրական արժեքին:

18 Կապիտալի կառավարում

Հաշվի առնելով Հիմնադրամի գործառնությունների բնույթը, Հիմնադրամը չունի ձևակերպված կապիտալի կառավարման քաղաքականություն: Հիմնադրամի նկատմամբ կիրառելի չեն կապիտալի կառավարման արտաքին պահանջներ:

Հիմնադրամի կողմից կրթական, սոցիալական և մշակութային ծրագրերի ֆինանսավորումը մեծապես պայմանավորված է տվյալ տարում նվիրատվություններից ստացված եկամտից: Ղեկավարության կարծիքով, Հիմնադրամը մինչ այսօր հնարավորություն է ունեցել համալրել բավարար միջոցներ և չի ակնկալում այդ նվիրատվությունների Էական նվազում կամ կրճատում տեսանելի ապագայում:

19 Պայմանական պարտավորություններ

Իրավական գործընթացներ: Հիմնադրամը չի ունեցել այնպիսի իրավական խնդիրներ, որոնք կարող են զգալի ազդեցություն ունենալ Հիմնադրամի ֆինանսական վիճակի վրա:

Պատական վարույթներ: Հիմնադրամը առ 31 դեկտեմբերի 2021թ. ներգրավված չի եղել նշանակալի դատական վարույթներում (առ 31 դեկտեմբերի 2020թ. ևս ներգրավված չի եղել որևէ դատական վարույթում): Ֆինանսական հաշվետվություններում այդ գծով պահուստ չի ստեղծվել:

Հարկեր: Հայաստանի Հանրապետության առևտրային համակարգը կարգավորող օրենսդրությունը, ներառյալ հարկային օրենսդրությունը, կարող է ունենալ մեկից ավելի մեկնաբանություններ: Ավելին, վտանգ կա, որ հարկային մարմինները կամայական դատողություններ կարող են կիրառել ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ: Եթե Հիմնադրամի գործունեության վերաբերյալ ղեկավարության որոշակի որոշումներ հարկային մարմինների կողմից վիճարկվեն, Հիմնադրամը կարող է ենթարկվել հավելյալ հարկերի, տույժերի և տուկոսների: Սովորաբար հարկային ստուգումը վերաբերում է առևտրի տարվան նախորդող երեք օրացուցային տարիներին: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Պարտավորություններ: Հիմնադրամը պարտավորվել է կառուցել երեք կենտրոն՝ երկուսը Երևանում և մեկը՝ Էջմիածնում: Այս ներդրումային ծրագրերի նկատմամբ Հիմնադրամի պարտավորությունները վերանայվել են համապատասխան պետական մարմինների կողմից՝ համապատասխան ոչ առևտրային գործունեության արտոնություններ և բացառություններ տրամադրելու համար: Իրականացված ծրագրերը և դրանց համապատասխան ժամկետները հետևյալն են. 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրականացված կապիտալ ծրագրերը կազմել են 784,358 հազար դրամ (2020 թ.՝ 784,358 հազար դրամ): 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի մնացած պարտավորությունը կազմել է 956,701 հազար դրամ (2020 թ.՝ 956,701 հազար դրամ):

Ղեկավարությունն ունի ավանդի հնարավորություն՝ պարտավորության գումարը ֆինանսավորելու համար: Ղեկավարությունը նախատեսում է նաև նոր ֆինանսական միջոցներ ներգրավել հիմնադրամի հիմնադիրներից և դոնորներից՝ մնացած գումարի համար:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկն այն հնարավոր կորուստների ռիսկն է, որը կառաջանա համակարգերի թերություններից, մարդկային սխալից, կեղծիքից կամ արտաքին միջավայրի իրադարձություններից: Երբ վերահսկողությանը չի հաջողվում կատարել իր գործառնականությունները, գործառնական ռիսկերը կարող են վնասել Հիմնադրամի հեղինակությանը, ունենալ իրավական կամ կանոնակարգիչ հետևանքներ, կամ հանգեցնել ֆինանսական կորուստների: Հիմնադրամը չի կարող ակնկալել, որ կբացառի բոլոր գործառնական ռիսկերը, սակայն ջանքեր է ձեռնարկում կառավարելու դրանք, ինչպես վերահսկողական հայեցակարգի, այնպես էլ հնարավոր ռիսկերի մոնիտորինգի և դրանց հակազդման միջոցով: Վերահսկողությունը ներառում է պարտականությունների արդյունավետ տարանջատում, մուտքի հասանելիության, լիազորման և համադրման ընթացակարգեր, աշխատակազմի կրթության և գնահատման գործընթացներ:

20 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Հոգաբարձուների խորհուրդը

Հիմնադրամի կառավարումը վերահսկվում է 14 հոգաբարձուների կողմից՝ Հիմնադրամի հիմնադիր Արմեն Սարգսյանի նախագահությամբ (2020թ.՝ 14 հոգաբարձուներ): Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության: Հոգաբարձուների նախագահը կամ հոգաբարձուները Հիմնադրամից վարձատրություն չեն ստանում, Հիմնադրամի նպատակներով ուղևորությունների չեն կատարում (և դրանց համար չեն փոխհատուցվում):

(բ) Ղեկավար անձնակազմի վարձատրությունը

Տարվա ընթացքում ղեկավարության ստացած վարձատրությունը կազմել է 11,912 հազ. ՀՀ (2020թ.՝ 37,317 հազ. ՀՀ դրամ), որից՝ պարգևավճարները կազմում են 1,845 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 8,364 հազ. ՀՀ դրամ): Հիմնական ղեկավար անձնակազմի աշխատավարձի գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամի մասնահանումներ՝ 136 հազ. ՀՀ դրամ (2020թ.՝ 456 հազ. ՀՀ դրամ):

21 Իրադարձություններ հաշվետու ժամանակաշրջանից հետո

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չեն ունեցել իրադարձություններ, որոնք կարող էին պահանջել ճշգրտում կամ բացահայտում Հիմնադրամի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում:

2021 թվականին Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում կայացրեց առանձնացնել «ԼուսԷ» կենտրոնը որպես հիմնադրամ, ինչը կօգնի կենտրոնին գործել ավելի ինքնուրույն, ֆինանսավորում ստանալ այլ աղբյուրներից ևս և ընդլայնել ու բարելավել իր գործունեությունը: Որոշման հիման վրա «ԼուսԷ վերականգնողական կենտրոն» հիմնադրամի պետական գրանցումը իրականացվել է 2022 թ. մարտի 3-ին: